

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ ՎԱՀԱՆ ԱՐԱՄԻ

**ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ
ԱՅՅՈՒԲՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների
դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2017

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Ա.Ս.

պատմական գիտությունների դոկտոր
ՄԱՐԳԱՐՅԱՆ Հ.Գ.

պատմական գիտությունների դոկտոր
ԲՈՂՈՅԱՆ Ա.Ա.

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017 թ. մայիսի 2-ին, ժամը 14⁰⁰-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. ապրիլի 3-ին:

Մասնագիտական խորհրդի քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՄՈՒՐԱԴՅԱՆ Հ. Ղ.

ԱՆԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Կիլիկյան Հայաստանի ռազմաքաղաքական վերելքը XII դ. վերջին տասնամյակներին և XIII դ. առաջին կեսին համընկավ Մերձավոր Արևելքում Այյուբյանների գերիշխանության դարաշրջանի հետ: Հատկապես թագավորության հռչակումից հետո Կիլիկյան Հայաստանը հայտնվեց թե Արևելքի և թե Արևմուտքի հզոր ուժերի ուշադրության կենտրոնում՝ մեծ անհանգստություն պատճառելով հարևան երկրներին: Կիլիկիայի աշխարհիկ և հոգևոր պետերը հանդես բերեցին բացառիկ հնարամտություն և ճկունություն մուսուլմաններ-խաչակիրներ հակամարտության պայմաններում կորուստներ չունենալու և հայկական պետությունն ամրապնդելու հարցում: Տարածաշրջանում գերիշխող դիրք ձեռք բերելու հայտ ներկայացրած Կիլիկյան Հայաստանի դեմ միավորվեցին հարևան երեք պետությունները: Մերթ զենքով, մերթ դիվանագիտությամբ պայքարելով՝ Կիլիկիան ի վերջո կարողացավ առանց կորուստների դուրս գալ թշնամական օղակումից հմտորեն օգտագործելով տարածաշրջանի վրա ազդեցություն ունեցող գերհզոր ուժերի կիլիկեցիների համար նպաստավոր միջամտությունները: Խիստ ուշագրավ և այսօրվա համար էլ ուսանելի է Կիլիկյան Հայաստանի ղեկավարների կարողությունը հստակ կերպով սահմանազատելու քաղաքական սառը հաշվարկը կրոնամշակութային նախապատվություններից: Հատկանշական է հնարավորության դեպքում բազմաբևեռ արտաքին քաղաքականություն վարելու ձգտումը, նորանոր բարեկամ պետություններ շահելու հետևողական դիրքորոշմամբ: Ոչ պակաս ուսանելի է հակառակորդների միջև եղած հակասություններն օգտագործելու նպատակով հետախուզական տվյալների վրա հիմնված դիվանագիտական ակտիվ նամակագրության կիրառումը: Արդիական նշանակություն ունի նաև բազմաբևեռ ուժերի միջև գտնվելու դեպքում հույսը սեփական ուժերի վրա դնելու և միաժամանակ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու Կիլիկյան Հայաստանի քաղաքականությունը, իսկ որևէ գերտերության բացարձակ տիրապետության պայմաններում, վերջինիս հետ անխախտ դաշինքի մեջ մնալով, հայրենի երկրի համար առավելագույն շահ ապահովելու իմաստությունը: Թեման արդիական է նաև ժամանակակից Մերձավոր Արևելքի բարդ գործընթացների խորքային պատմական շերտերի բացահայտման առումով:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:

Ատենախոսության նպատակն է ժամանակագրական պարբերացման ենթարկել Կիլիկիայի հայկական պետության ու Այյուբյան պետությունների փոխհարաբերությունների պատմությունը: Բացահայտել արաբական պատմագրության մեջ, հատկապես այյուբյան շրջանում կիրառված «Իբն Լևոն» բառակապակցության իմաստը, նշանակությունն ու ծագումը: Ներկայացնել Կիլիկյան Հայաստանի հարևան Ասորիք-Ջազիրայում XII դ. 70-ական թթ. երկրորդ կեսին տիրող իրավիճակը և վերհանել 1180 թ. Սալահ ալ-Դինի գլխավորությամբ Այյուբյան զորքի Կիլիկիա կատարած արշավանքի պատճառներն ու

հետևանքները: Բացահայտել Ռուբեն Գ-ի և Հայոց կաթողիկոս Գրիգոր Դ Տղայի՝ 1185-1186 թթ. Եզիպտոս ուղարկած պատվիրակության նպատակը: Պարզել խաչակրաց III արշավանքի ժամանակ՝ 1190 թ., խաչակիրներ-Սալահ ալ-Դին հակամարտության պայմաններում Լևոն Բ-ի և Գրիգոր Դ-ի դիվանագիտական պայքարի մանրամասները, ինչպես նաև Այյուբյան սուլթանի՝ 1193 թ. Կիլիկյան Հայաստան արշավելու հավանականությունը: Վեր հանել Անտիոք-Հալեպ-Իկոնիա հակակիլիկյան ռազմական դաշինքի ձևավորման պատճառները: Ներկայացնել Կիլիկիայի հայկական թագավորություն-Հալեպի Այյուբյան սուլթանություն պատերազմի (1203-1206) ընթացքը, փուլերն ու հետևանքները: Բացահայտել Եզիպտոսի Այյուբյան սուլթանության դերը՝ 1208/1209 թ. Կիլիկյան Հայաստանը թշնամական օղակից դուրս բերելու հարցում: Գնահատել Անտիոքի գահաժառանգման խնդրում Լևոն Ա-ի բազմաբևեռ արտաքին քաղաքականության արդյունավետությունը: Բացահայտել Անտիոքի գրավումից (1216 թ.) հետո Այյուբյանների նկատմամբ Լևոն Մեծագործի քաղաքականության հետևանքները: Պարզել Հալեպի և Ջազիրայի Այյուբյանների հետ կիլիկյան իշխանությունների 1219 և 1225/1226 թթ. գործակցության դրդապատճառները: Պարզել Երզնկայի 1230 թ. ճակատամարտին Կիլիկյան Հայաստանի և Հալեպի Այյուբյանների մասնակցության հավանականությունը: Ներկայացնել Չմանկատուկի (1243 թ.) ճակատամարտից հետո տարածաշրջանում ստեղծված իրավիճակը և Կիլիկյան Հայաստանում ու Այյուբյան պետություններում զուգահեռ ընթացող գործընթացները: Բացահայտել մոնղոլների ասորիքյան առաջին արշավանքին (1259-1260) Կիլիկյան Հայաստանի մասնակցության դրդապատճառները, ընթացքն ու հետևանքները: Ճշգրտել 1258-1262 թթ. Հեթում Ա-ի ջանքերի հետևանքով Հայոց թագավորության ընդարձակման հանգամանքներն ու մանրամասները: Պարզել «Այյուբյան» պատմաշրջանի հավանական դերը «Սասնա Ծռերի» պատմական հենքի ձևավորման մեջ:

ԱՍԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ: Այյուբյան սուլթանության և նրան մաս կազմած առանձին պետական միավորների հետ Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերությունները ընդգրկում են XII դ. 70-ական թթ. մինչև XIII դ. 60-ական թթ., այսինքն՝ Այյուբյանների սուլթանության ամբողջ ընթացքը: Այյուբյանների տերության պատմությունը բաժանվում է առնվազն երեք շրջափուլի՝ ա.միասնական պետության (1171-1193), բ. նույն տոհմին պատկանող մեկից ավելի պետությունների «համադաշնության» (1193-1250) և գ.միայն Ասորիքում ամփոփված առանձին պետության (1250-1260): Այս պետությունների հետ Կիլիկյան Հայաստանը տարատեսակ առնչություններ ունեցավ Ռուբեն Գ-ի, Լևոն Մեծագործի, Կոստանդին պայլի և Հեթում Ա-ի օրոք:

ՈՒՍՈՒՄՆԱԽԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Հետազոտության մեթոդաբանության հիմքում ընկած է պատմահամեմատական մեթոդը և պատմականության սկզբունքը: Ատենախոսության շարադրանքի հաջորդականությունը պայմանավորված է թեմատիկ և ժամանակագրական սկզբունքներով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

1. Կիլիկյան Հայաստանի և Այյուբյան պետությունների փոխհարաբերությունները ոչ հայ, ոչ էլ օտար պատմագիտության մեջ, առանձին ուսումնասիրման ցայսօր չեն ենթարկվել:

2. Արաբական պատմագրության մեջ, հատկապես Այյուբյան շրջանում համատարած կերպով կիրառվում են «Իբն Լևոն» և «Բիլադ Իբն Լևոն» արտահայտությունները, որոնք հաճախ թարգմանվում են որպես «Լևոնի որդի» և «Լևոնի որդու երկիր» ուսումնասիրողների մոտ շփոթություն ստեղծելով: Մանրամասն վերլուծության են ենթարկվել այդ արտահայտությունները, դրանց ծագումը, իմաստային ու ժամանակատարածային ընդգրկումը:

3. Պատմագիտության մեջ Սալահ ալ-Դինի 1180 թ. արշավանքը Կիլիկիա արձանագրված է: Սակայն առաջին անգամ է, որ այն ներկայացվում է ամենայն մանրամասնությամբ՝ հիմնվելով սկզբնաղբյուրների հարուստ տեղեկությունների վրա: Ներկայացվում է նաև երկու պետությունների միջև ստորագրված հաշտությունը և դրա հետևանքները:

4. Վերլուծվում են Ռուբեն Գ-ի՝ միացյալ քրիստոնեական ուժերին միանալու և Հարիմի ամրոցի դեմ արշավանքի դրդապատճառները:

5. Պատմագիտության մեջ ընդամենը հարևանցի անդրադարձեր են եղել 1185-1186 թթ. Կիլիկիայից Եգիպտոս ուղարկված պատվիրակությանը: Արժեքավոր աղբյուրի տեղեկությունների ընդգրկումը հնարավորություն է տվել բացահայտել այդ պահին Կիլիկյան Հայաստան-Այյուբյան սուլթանություն հարաբերությունների վիճակը:

6. Ատենախոսության մեջ հավելյալ աղբյուրների ընդգրկումով և համեմատական վերլուծությամբ փորձ է կատարվել հաստատել կամ ժխտել 1187/1188 թ. ասորիքյան զորաշուկատի Անտիոքից Կիլիկիա մտնելու փորձը և 1193-ին ընդհատված արշավանքը: Քննությունը ցույց է տվել երկուսի էլ մեծ հավանականությունն ու համապատասխանությունն Այյուբյանների տվյալ պահի քաղաքականությանը, միաժամանակ կատարվել են կարևոր ճշգրտումներ: Հանգել ենք այն եզրակացության, որ չնայած վերոհիշյալ երկու դրվագներին, հաշտության ստորագրումից հետո 1180-1193 թթ. Կիլիկյան Հայաստանի և Այյուբյանների հարաբերությունները կարելի է չեզոք համարել:

7. Հանգամանորեն լուսաբանվել են Տրիպոլիս-Հալեպ-Իկոնիա հակակիլիկյան դաշինքի ձևավորման դրդապատճառները:

8. Սկզբնաղբյուրների առավելագույն ընդգրկումով ատենախոսության մեջ լուսաբանված է 1203-1206 թթ. Կիլիկյան Հայաստան-Հալեպի Այյուբյան սուլթանության պատերազմը, որը «Անտիոքյան պատերազմի» բաղկացուցիչ մասն է: Բացահայտվել է ռազմական գործողությունների ընթացքի ու տրամաբանության և ստորագրված հաշտության պայմանների միջև անհամապատասխանության պատճառները:

9. Հավելյալ արքյուրների ներգրավումով վերջնական հստակություն է մտցվել 1208/1209-ին, ի պատասխան Լևոն Մեծագործի դիմումի, «Անտիոքյան» հարցին Եգիպտոսի Այյուբյան սուլթան ալ-Մալիք ալ-Ադիլի միջամտության և դրա արդյունքում Հալեպի և Իկոնիայի սուլթանների Հայոց թագավորության հետ հաշտություն կնքելու հանգամանքները, դրդապատճառներն ու արդյունքները:

10. Պատմագիտության մեջ առաջին անգամ շրջանառության մեջ են դրվել արաբ պատմիչների երկերում պահպանված վկայությունները 1216 թ. Անտիոքի գրավումից հետո Լևոն Ա-ի վարած նախաձեռնողական բազմաբևեռ արտաքին քաղաքականության մասին, որի արտահայտությունն էր Եգիպտոսի ու Ասորիքի Այյուբյանների հետ նամակագրությունն ու դիվանագիտական աշխատանքը: Հայոց թագավորի 1216 թ, ուղերձը Հալեպի Այյուբյան սուլթան ալ-Մալիք ալ-Ջահիրին առաջին անգամ է դրվում շրջանառության մեջ: Եգիպտոսի սուլթանի ճնշման տակ Հալեպի Այյուբյանները ձեռնպահ մնացին Կիլիկյան Հայաստանի դեմ թշնամական գործողություններից:

11. Ատենախոսության գիտական նորույթն է նաև 1216-1230 թթ. «Սիս-Հալեպ» գործակցության փուլի բացահայտումը ու դրա առանձին դրվագների լուսաբանումը, որոնց թվում են 1219, 1226, 1228-1230 թվականների իրադարձությունները, ինչպես նաև Կիլիկյան Հայաստանի ու Այյուբյան «համադաշնության» մասնակցությունը Երզնկայի 1230 թ. ճակատամարտին:

12. Ուսումնասիրված և ճշգրտված են Կիլիկյան Հայաստան-Հալեպի Այյուբյաններ հարաբերությունների ժամանակափուլերը, հատկապես 1230-1243 թթ. և 1243-1259 թթ., որտեղ ջրբաժանի դեր է խաղում Չմանկատուկի 1243 թ. ճակատամարտը: Վերլուծված են նախքան ճակատամարտը և դրանից հետո երկու պետությունների հարաբերությունները միմյանց հետ և Իկոնիայի սելջուկների ու մոնղոլների հանդեպ: Բացատրվում է նաև մոնղոլների հետ հարաբերություններ հաստատելու հարցում հաջողության կամ անհաջողության պատճառները:

13. Մանրամասն ներկայացվում է 1259-1260 թթ. ստեղծված իրավիճակը տարածաշրջանում և Կիլիկյան Հայաստան-Ասորիքի Այյուբյան սուլթանություն հարաբերությունների նոր փուլը:

14. Աղբյուրագիտական լայն հենքի վրա մանրամասն ներկայացված է Կիլիկյան Հայաստանի զինված ուժերի մասնակցությամբ Ասորիքի Այյուբյանների դեմ մոնղոլների 1259-1260 թթ. արշավանքը, և դրա հետևանքով նախկին Եփրատացիք նահանգի միացումը Հայոց թագավորությանը:

15. Փորձ է արված հավելյալ փաստարկներով առավել հիմնավորելու ուսումնասիրողների կողմից առաջարկված, բայց բավարար ուշադրության չարժանացած մի տեսակետ, որը ցույց է տալիս «Այյուբյան դարաշրջանի» դերը «Սասնա Շոեր» ժողովրդական դյուցազնավեպի ձևավորման վրա:

Ատենախոսությունն ունի նաև գործնական և կիրառական նշանակություն: Նրա դրույթները, վերլուծությունների արդյունքում առաջ քաշված եզրահանգումներն ու առաջարկությունները կարող են օգտագործվել Հայոց

պատմության դասագրքերի կազմման, Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականությանն ու հայ-արաբական պատմամշակութային առնչություններին նվիրված ուսումնական ձեռնարկների ու դասընթացների շարադրման համար: Կարող է օգտակար լինել նաև արևելագետների ու դիվանագետների համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդում: Այն քննարկվել է հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու դրույթները հրատարակվել են մենագրությունների ու հոդվածների տեսքով: Թեմայի վերաբերյալ զեկուցումներ են ներկայացվել հանրապետական և միջազգային գիտաժողովներում:

ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅԱՆ ԱՐՔՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՔԸ ԵՎ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ: Կիլիկյան Հայաստանի և Այյուբյան պետությունների փոխհարաբերությունները ո՛չ հայ, ո՛չ էլ օտար պատմագիտության մեջ առանձին ուսումնասիրման ցայսօր չեն ենթարկվել:

Սկսած XVIII դ. վերջերից, երբ Կիլիկյան Հայաստանի պատմությունը դարձավ ուսումնասիրման առարկա հետազոտողներն այս կամ այն չափով անդրադարձան նաև արաբական երկրների հետ հայկական այդ պետության առնչություններին: Սակայն առավելաբար հայկական, բյուզանդական և լատին աղբյուրների վրա հիմնվելն նրանց թույլ չտվեց լիովին բացահայտել Կիլիկյան Հայաստանի և Մերձավոր Արևելքի արաբական պետությունների ռազմաքաղաքական ու դիվանագիտական փոխհարաբերությունների մանրամասներն ու խորքային պատճառները՝ երբեմն պարտադրելով շրջանցել բախտորոշ նշանակություն ունեցած շատ իրադարձություններ:

Ուսումնասիրվող թեմային վերաբերող սկզբնաղբյուրները բաժանվում են հետևյալ խմբերի.

ա. Հայկական սկզբնաղբյուրներից ժամանակագրորեն առաջինը XII դ. ժամանակագիր Սամվել Անեցու և Շարունակողների աշխատությունն է, որտեղ խնդրո առարկա թեմային վերաբերող տեղեկությունների շարքում արժեքավոր են Սալահ ալ-Դինի և Անտիոքի Բոհեմունդ III իշխանի միջև 1185 թ. կնքված հաշտության, վերջինիս կողմից Ռուբեն Գ-ի ձերբակալության և դրան հաջորդած դեպքերի մասին վկայությունները: «Ժամանակագրությունը» արժեքավոր և երբեմն եզակի տեղեկություններ է պարունակում ողջ ժամանակաշրջանի վերաբերյալ՝ ընդհուպ մինչև 1260 թ.¹:

Արժեքավոր և առատ տեղեկություններով շահեկանորեն առանձնանում է Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը», որի շատ վկայություններ, գրված լինելով

¹ Սամուել Անեցի եւ Շարունակողներ, Ժամանակագրութիւն, աշխատասիրութեամբ Կարեն Մաթևոսյանի, Երևան, 2014 (այսուհետև՝ Սամուել Անեցի և Շարունակողներ):

ժամանակակցի ու ականատեսի լավատեղյակությամբ, խիստ արժանահավատ են²:

Հայկական սկզբնաղբյուրների շարքում հարուստ տեղեկություններով աչքի է ընկնում XIII դ. պատմիչ Կիրակոս Գանձակեցու երկը: Բացառիկ են նրա տեղեկությունները 1203-1206 թթ. պատերազմի, ինչպես նաև Երզնկայի 1230 թ. ճակատամարտին հայերի ու ֆրանկների մասնակցության վերաբերյալ³: Սմբատ Սպարապետի նման Կիրակոս Գանձակեցին ժամանակակից է քննության առարկա իրադարձություններին:

Նույն դարի հայ պատմիչներից մեզ զբաղեցնող թեմայի վերաբերյալ կարևոր տեղեկություններ է հաղորդում Վարդան վարդապետը: Նա իր երկում եզակի տվյալներ է արձանագրել երրորդ խաչակրության նկատմամբ Լևոն Բ իշխանապետի դիրքորոշման մասին: Դրանք արաբական աղբյուրների տեղեկությունների համադրությամբ լույս են սփռում խաչակիրներ-Այյուբյաններ հակամարտությունից Կիլիկյան Հայաստանը գերծ պահելու ուղղությամբ Լևոն Բ-ի դիվանագիտական ձեռնարկումների վրա: Նրա տեղեկությունները ևս շարադրված են ժամանակակցի լավատեղյակությամբ և հավաստի են ոչ միայն այդ, այլ նաև հեղինակի՝ որոշ ժամանակ Կիլիկիայում ապրած լինելու ուժով⁴:

Միջնադարյան հայ մատենագիրներից օգտագործել ենք նաև Վահրամ Բաբունու⁵ և Հեթում պատմիչի⁶ պատմագրական երկերը, ինչպես նաև XIII դ. մանր ժամանակագրություններ⁷ և հայերեն ձեռագրերի հիշատակարաններ⁸:

բ. Արաբական աղբյուրներ. մենագրության սկզբնաղբյուրային հենքի զգալի մասը բաժին է ընկնում արաբ մատենագիրների երկերին: Դրանցից առատ

² Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Փարիզ, 1859, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, աշխատասիրութեամբ Հ. Սերովբէ Ազըլեանի, ս.Ղազար, Վենետիկ, 1956 (այսուհետև՝ Սմբատ Սպարապետ):

³ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ.Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961 (այսուհետև՝ Կիրակոս Գանձակեցի):

⁴ Մեծին Վարդանայ Բարձրբերդցոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861 (այսուհետև՝ Վարդան Բարձրբերդցի), Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, ս.Ղազար, Վենետիկ, 1862 (այսուհետև՝ Վարդան վարդապետ):

⁵ Վահրամայ Բաբունոյ Ուտանաւոր պատմութիւն Ռուբենեանց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ վարդապետ Շահնազարեանց, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Փարիզ, 1859 (այսուհետև՝ Վահրամ Բաբունի):

⁶ Մաթևոսյան Կ., Հեթում պատմիչ Կողիկոսցին և նրա «ժամանակագրությունը», Երևան, 2011 (այսուհետև՝ Հեթում պատմիչ), Hayton, La Flor des estoires de la Terre d'Orient, "Recueil des historiens des Croisades". Documents arméniens, t. 2, Documents latins et francais relatives a l'Arménie, éd. Ch. Kholer, Paris, 1906, p. 147-219 (այսուհետև՝ Hayton):

⁷ Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հ. I, կազմեց Վ.Ա. Հակոբյան, Երևան, 1951, հ. II, կազմեց Վ.Ա. Հակոբյան, Երևան, 1956 (այսուհետև՝ Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ.):

⁸ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, աշխատասիրությամբ Ա. Ս. Մաթևոսյանի, Երևան, 1984 (այսուհետև՝ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար):

տեղեկություններով աչքի են ընկնում XIII դ. նշանավոր մատենագիր Իբն ալ-Ասիրի «Լիակատար պատմություն», ինչպես նաև «Մոսուլի աթաբեկների պատմություն» աշխատությունները, որոնցում լայնորեն արձարձված են Ռուբինյան պետության և Այյուբյան սուլթանության փոխհարաբերությունները: Հայոց թագավորության և Անտիոքի իշխանության 1224-1226 թթ. ռազմական բախման և այդ պայքարին Հալեպի ու Իկոնիայի սուլթանությունների մասնակցության վերաբերյալ նրա հաղորդումը եզակի է⁹:

Ատենախոսության համար արժեքավոր սկզբնաղբյուր է XIII դ. պատմիչ և դիվանագետ Իբն Վասիլի պատմական երկը¹⁰, որտեղ հարուստ տեղեկություններ կան ինչպես Սալահ ալ-Դինի շրջանի, այնպես էլ նրան հաջորդած Այյուբյան տարբեր տիրակալների մասին: Իսկ նրա հաղորդած տեղեկությունները 1208-1209 և հատկապես 1216 թթ. Լևոն Ա - ալ-Մալիք ալ-Ադիլ և Լևոն Ա - ալ-Մալիք ալ-Չահիր հարաբերությունների մասին՝ բացառիկ են:

Սալահ ալ-Դինի գլխավորությամբ 1180 թ. դեպի Կիլիկիա արշավանքի մասին կարևոր տեղեկություններ կան Իմադ ալ-Դին ալ-Իսֆահանյիի երկում, որը մեզ է հասել ալ-Բունդարիի համառոտագրությամբ¹¹: Այդ նույն արշավանքի մասին արժեքավոր հաղորդում ունի պատմիչ ալ-Մալիք ալ-Մանսուրը¹²:

Ոչ պակաս կարևոր աղբյուր է Քամալ ալ-Դին իբն ալ-Ադիմի «Հալեպի պատմության սերուցք»-ը: Դրանում հատկապես արժեքավոր են XII դ. վերջին քառորդին և XIII դ. առաջին տասնամյակին վերաբերող նյութերը: Իբն ալ-Ադիմի երկն այն սակավաթիվ աղբյուրներից է, որը մանրամասն հաղորդում է Կիլիկյան Հայաստանի և Հալեպի Այյուբյան սուլթանության միջև 1203-1206 թթ. պատերազմի մասին: Խիստ ուշագրավ են պատմիչի հաղորդումները Հարիմ ամրոցի 1177-1178 թթ. պաշարմանը հայկական բանակի մասնակցության, դեպի Կիլիկիա Այյուբյանների երկրորդ արշավանքի, 1208/1209 թ. Եգիպտոսի ալ-Մալիք ալ-Ադիլ սուլթանին և 1216 թ. ալ-Մալիք ալ-Չահիրին Լևոն Մեծագործի հղած նամակների¹³ և հարակից այլ իրադարձությունների վերաբերյալ: Այս տեղեկությունները զգալիորեն ամբողջացնում են Կիլիկյան Հայաստանի և Այյուբյան սուլթանության ռազմաքաղաքական և դիվանագիտական

⁹ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11, Արաբական աղբյուրներ Բ, Իբն ալ-Ասիր, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981 (այսուհետև՝ Իբն ալ-Ասիր), նաև Ibn al-Aṣīr, Al-Kāmil fi-l-tārīḥ, հտ. 10, խմբ. Muḥammad Yūsuf al-Daqqāq, Bayrūt, 2003 (այսուհետև՝ Ibn al-Aṣīr, Al-Kāmil fi-l-tārīḥ):

¹⁰ **Ibn Wāṣil**, Mufarrīḡ al-kurūb fi aḥbār banī Ayyūb, v. II, v. III, խմբ. Gamāl al-Dīn al-Šayyāl, al-Qāhira, 1957 (այսուհետև՝ **Ibn Wāṣil**, Mufarrīḡ al-kurūb):

¹¹ Imād al-Dīn Isfahānī, al-Barq al-Šāmī, al-Bundarī, Sanā al-barq al-Šāmī, bi-taḥqīq Faṭḥiyya al-Nabrawī, 1979, al-Qāhira (այսուհետև՝ al-Bundarī, Sanā al-barq al-Šāmī):

¹² Al-Malik al-Manṣūr, Miḡmār al-ḥaqāʿiq wa sirr al-ḥalāiq, Ālam al-kutub, al-Qāhira, 1968 (այսուհետև՝ Al-Malik al-Manṣūr, Miḡmār al-ḥaqāʿiq):

¹³ Kamal ad-Dīn Ibn al-Adīm, Zubdat al-halab fi tarikh Halab, Damas, t. I, Damas, 1951, t. II, Damas, 1954, t. III, 1968 (այսուհետև՝ Ibn al-Adīm, Zubdat al-Halab):

փոխհարաբերությունների պատկերը XII դ. վերջին և XIII դ. առաջին տասնամյակում:

Արաբական մատենագրության նշանավոր հուշարձաններից է Յակուտ ալ-Համավիի (մահ.1229) «Երկրների բառարանը», որից օգտագործել ենք «Թալ Բաշիր», «Բաղդաս», «Դայր Բասաք», «Սիս», «Կալաաթ առ-Ռում», «Մարաշ», «ալ-Մասիսա» և Կիլիկիային վերաբերող այլ բառահոդվածներ¹⁴:

Օգտագործված արաբալեզու աղբյուրների մեջ առանձին հիշատակության են արժանի Բահա ալ-Դին իբն Շադդադի (մահ. 1234), Աբու Շամայի (մահ.1267) և Իբն Խալլիքանի (1211-1282) կենսագրական բնույթի երկերը:

Բահա ալ-Դին Իբն Շադդադի երկերից ամենանշանավորը «Սալահ ալ-Դինի կենսագրությունն»¹⁵ է: Հեղինակը, նշում է, որ մինչև 1188 թ. տեղ գտած իրադարձությունների վերաբերյալ նյութերը քաղել է վստահելի ընկերների վկայություններից, իսկ սուլթանի վերջին հինգ տարիների կյանքը (1188-1193) շարադրել է որպես ականատես:

Իբն Շադդադի հաղորդումներից առանձնակի կարևոր են սուլթան Սալահ ալ-Դինին Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի ուղարկած նամակները, որոնցից առաջինը պատմիչն ամբողջությամբ վերաշարադրել է: Այս նամակների մասին վկայում է նաև մեկ այլ արաբ մատենագիր՝ Աբու Շաման իր «Զույգ պարտեզների գրքում»: Պատմիչը հաղորդում է նաև Սալահ ալ-Դինի 1180 թ. Կիլիկիա արշավելու մասին¹⁶:

Իսնդրո առարկա թեմայի, մասնավորաբար Կիլիկյան Հայաստանի, Սալահ ալ-Դինի տերության և Իկոնիայի սուլթանության փոխհարաբերությունների մասին, արժեքավոր տեղեկություններ է հաղորդում XIII դ. մեկ այլ հեղինակ Իբն Խալլիքանն իր «Կենսագրական բառարան»-ում¹⁷:

Կիլիկյան Հայաստանի ու Այլոբյան սուլթանության փոխհարաբերություններին անդրադարձել են նաև XIV և XV դարերի որոշ արաբագիր պատմիչներ: Նրանցից հիշատակելի են ալ-Չահաբին, Աբու Լ-Ֆիդան և Իբն ալ-Ֆուրայթ: Առաջինն իր «Իսլամի դինաստիաներ» երկում համառոտ,

¹⁴ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Յակուտ ալ-Համավի, Աբու-Ֆիդա, Իբն Շադդադ կազմեց Հ.Նալբանդյան, Երևան, 1965 (այսուհետև՝ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին), նաև Yāqūt al-Ḥamawī, Mu'ğam al-buldān, v. 2, Bayrūt, 1977 (այսուհետև՝ Yāqūt al-Ḥamawī, Mu'ğam al-buldān):

¹⁵ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, նաև Ibn Šaddād, Bahā' al-Dīn, Kitāb al-Nawādir al-sultāniyya wa-mahasin al-Yūsufiyya, Dimašq, 1979 (այսուհետև՝ Ibn Šaddād, Kitāb al-Nawādir):

¹⁶ Abu Shama, Abū al-Šāma Tarāğim al-riğāl al-qarnayn al-sādis wa-l-sābi' (Dayl 'alā al-rawḡatayn), Bayrūt, 1974, (այսուհետև՝ Abu Shama, Kitāb al-Rawḡatayn), Abū al-Šāma, 'Uyūn al-Rawḡatayn fī aḥbār al-dawlatayn, v. I, Dimašq, 1991, Abū Šāma, Kitāb al-Rawḡatayn fī aḥbār al-dawlatayn al-Nūriyya wa-l-Šalāhiyya, v. IV, Bayrūt, 2002:

¹⁷ Ibn Ḥallikān, Wafāyat al-a'yān wa-anbā' abnā' al-zamān, hun. 7, խմբ. Iḥsān 'Abbās, Bayrūt, 1972, (այսուհետև՝ Ibn Ḥallikān, Wafāyat al-a'yān), նաև Ibn Khallikan, Biographical Dictionary, tr. by William MacGuckin de Slane, vol. III, IV, London, 1871:

սակայն բավական արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Կիլիկյան Հայաստանի ու Հալեպի սուլթանության զինաբախումների վերաբերյալ¹⁸: Սալահ ալ-Դինի 1180 թ. Կիլիկիա կատարած արշավանքին, ինչպես նաև Հալեպի և Իկոնիայի սուլթանությունների միջև 1208 թ. հաստատված հակակիլիկյան դաշինքին վերաբերող ուշագրավ տեղեկություններ են արձանագրված Աբու Լ-Ֆիդայի «Մարդկության համառոտ պատմության» մեջ¹⁹: Ինչ վերաբերում է Իբն ալ-Ֆուրաթին, ապա նրա՝ մեզ հետաքրքրող տեղեկությունները վերաբերում են Գրիգոր Դ Տղայի Սալահ ալ-Դինին ուղղած նամակին, որը գրեթե չի տարբերվում Իբն Շադդադի երկում հանդիպող օրինակից և հավանաբար հենց այնտեղից էլ քաղված է²⁰: Նույն այդ նամակի մասին հաղորդում է նաև Իմադ ալ-Դին ալ-Իսֆահանին իր պատմական երկում²¹:

Ջալալ ալ-Դին Խորեզմշահի արշավանքներին և նրա դեմ առաջացած դաշինքի մասին հաղորդում է Մուհամմադ ալ-Նասավին²²: Հուլաղուի ասորիքյան արշավանքի և դրա հետևանքով Կիլիկյան Հայաստանի ընդարձակման վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում ալ-Ջազարին²³, Իզդ ալ-Դին Իբն Շադդադը²⁴, ալ-Այնին²⁵, Մուֆազզալ իբն Աբի-լ-Ֆադաիլը²⁶, Իբն ալ-Ամիդը²⁷, ալ-Նուայրին²⁸, Իբն ալ-Շիհնան²⁹, Իբն Քասիրը³⁰ և Իբն Թադրի

¹⁸ Al-Dahabī, Kitāb duwal al-Islām, v. 1-2, Beirut, 1979, 437 էջ, 384 էջ (այսուհետև՝ Al-Dahabī, Kitāb duwal al-Islām), նսւս՝ Al-Dahabī, Tārīḥ al-Islām wa-wafayāt al-mašāhīr wa-l-a'lām, խմբ. 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, hun. 42, 43, Bayrūt, 1997, 676 էջ, 568 էջ (այսուհետև՝ Al-Dahabī, Tārīḥ al-Islām):

¹⁹ Տե՛ս Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 211-291:

²⁰ Ibn al-Furāt, Tārīḥ al-Duwal wa l-Mulūk, v. 4.1, խմբ. Ḥasan Muḥammad Šammā', Bašra, 1967 (այսուհետև՝ Ibn al-Furāt, Tārīḥ al-Duwal wa l-Mulūk):

²¹ 'Imād al-Dīn al-İşfahānī, Kitāb al-Fath al-Qusī fi al-fath al-Qudsī ('Imād ed-dīn el-kātib el-işfahānī, Conquete de la Syrie et de La Palestine par Šalāḥ ed-dīn, publié par le comte Carlo de Landberg, E. J. Brill, Leide, 1888), այսուհետև՝ 'Imād al-Dīn al-İşfahānī, Kitāb al-Fath :

²² Шихаб ад-Дин Мухаммад ан-Насави, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, пер.с арабск. З.М. Буниятова, Баку, 1973 (այսուհետև՝ Мухаммад ан-Насави):

²³ Al-Ġazarī, Ḥawādīṯ al-Zamān wa anba' uhu wa wafayāt al-akābir wa al-a' yān min abnā' ihī, v. 1, Bayrūt, 1998 (այսուհետև՝ Al-Ġazarī, Ḥawādīṯ al-Zamān):

²⁴ 'Izz al-Dīn Ibn Šaddād, Al-A'lāq al-Ḥaḫīra fi ḡikr umarā' al-Šām wa-l-Ġazīra, hun. 1.1, 1.2, 3.1, խմբ. Yahyā Zakaryā 'Abbāra, Dimašq, 1978-1991 (այսուհետև՝ 'Izz al-Dīn Ibn Šaddād, Al-A'lāq al-Ḥaḫīra):

²⁵ Al-'Aynī, 'Iqd al-ġumān fi tāriḥ ahl al-zamān, v. III, bi-taḥqīq Muḥammad Muḥammad Amīn, al-Hay'a al-miṣriyya al-'āma li-l-kitāb, al-Qāhira (այսուհետև՝ Al-'Aynī)

²⁶ Mufaḍḍal ibn Abī al-Fadā' il, al-Nahğ as-sadiḍ wa-durr al-farīd fimā ba'da tāriḥ ibn al-'Amīd (Moufazzal ibn Abil-Faza'il, Histoire des sultans mamlouks, Texte Arabe publié et traduit en Français par E. Blochet // Patrologia Orientalis, t. 14, Paris, 1920 (այսուհետև՝ Mufaḍḍal ibn Abī al-Fadā' il):

²⁷ Ibn al-'Amīd, Aḫbār al-Ayyūbiyyīn (al-Mağmū' al-mubārak), Maktabat al-taqāfa al-dīniyya, Būr Sa'īd (առանց տարեթվի), այսուհետև՝ Ibn al-'Amīd, Aḫbār al-Ayyūbiyyīn:

²⁸ al-Nuwayrī, Nihāyat al-arab fi funūn al-adab, ց. 31, bi-taḥqīq Nağīb Muštafā Fawwāz, Hikmat Kişli Fawwāz, Ibrāhīm Šams al-Dīn (և այլոց), Dār al-Kutub al-'Ilmiyya, Bayrūt, 2004 (այսուհետև՝ al-Nuwayrī, Nihāyat al-arab):

²⁹ Ibn al-Šiḫna, Al-Durr al-muntaḥab fi tāriḥ mamlakat Ḥalab, bi-taḥqīq 'Abd Allāh Muḥammad Darwīš, Dimašq, 1984 (այսուհետև՝ Ibn al-Šiḫna, Al-Durr al-muntaḥab):

Բիրդին³¹: Մենագրության մեջ օգտագործվել են նաև Իբն Նազիֆ ալ-Համավի³², Սիբտ Իբն ալ-Ջաուզի³³ և ալ-Մակրիզի³⁴ երկերը:

Ռուբինյան տոհմին արաբ պատմագրության մեջ տրված անվանումներին, մասնավորապես, հաճախ հանդիպող «Իբն Լևոն» և մի շարք այլ արտահայտությունների բուն իմաստի բացահայտման համար, բացի արդեն նշված հեղինակներից, օգտագործվել են նաև հետևյալ մատենագիրների երկերը՝ Իբն Աբդ ալ-Ջահիրի «Ալ-Ռաուդ ալ-Ջահիր»³⁵, Իբն ալ-Կալանիսի «Չայլ Թարիխ Դիմաշկ»³⁶, Իբն ալ-Իբրիի (Բար Հեբրեոս) «Դինաստիաների համառոտ պատմություն»³⁷, Բայբարս ալ-Մանսուրիի «Չուբդա ալ-Ֆիքրա ֆի թարիխ ալ-հիջրա»³⁸, վերջինիս վերագրվող «Մուխթար ալ-Ախբար»³⁹, Իբն ալ-Դավադարիի «Քանգ ալ-դուրար ուա ջամի ալ-դուրար»⁴⁰ և Իբն Բատուայի երկերը⁴¹,

գ. Ասորական աղբյուրներ. քննվող թեմայի վերաբերյալ արժանահավատ տեղեկություններով պքի են ընկնում ասորագիր պատմիչների երկերը, որոնք խիստ ուշագրավ մանրամասներ են հաղորդում Մերծավոր Արևելքի երկրների հետ Կիլիկյան Հայաստանի XII դ. երկրորդ կեսի և XIII դ. առաջին կեսի առնչությունների վերաբերյալ:

Այդ հեղինակներից հիշատակելի է XII դ. նշանավոր պատմիչ պատրիարք Միքայել Ասորին, որի «ժամանակագրությունը» միջնադարյան մատենագրության նշանավոր հուշարձաններից է: Նա տեղեկություններ է հաղորդում XII դ. վերջին

³⁰ Ibn Kaḫīr, al-Bidāya wa-l-nihāya, v. XVII, al-Qāhira, 1998 (այսուհետև՝ Ibn Kaḫīr, al-Bidāya wa-l-nihāya):

³¹ Ibn Taḡrī Birdī, Al-Manhal al-Ṣāfi wa-l-Mustawfi ba'da al-Wāfi, v. V., bi-tahqīq Muḥammad Muḥammad 'Amīn, al-Hay' a al-Miṣriyya al-'Āmma li-l-Kitāb, al-Qāhira (այսուհետև՝ Ibn Taḡrī Birdī, Al-Manhal al-Ṣāfi)

³² Ibn Nazīf al-Ḥamawī, al-Tārīḥ al-Manṣūrī, խմբ. Abū al-'Īd al-Dūdū, 1981 (այսուհետև՝ Ibn Nazīf al-Ḥamawī, al-Tārīḥ al-Manṣūrī):

³³ Sibṭ ibn al-Gawzī, Mirāt al-zamān fi tārīḥ al-a'yān, hun. 8, (ed. with introduction by J. R. Jewett, Chicago, 1907), այսուհետև՝ Sibṭ ibn al-Gawzī, Mirāt al-zamān:

³⁴ Al-Maqrīzī, Kitāb al-sulūk li-ma'rifat duwal al-mulūk, v. 1.2, al-Qāhira, 1957 (այսուհետև՝ Al-Maqrīzī, Kitāb al-sulūk):

³⁵ Ibn 'Abd al-Zāhir, Al-Rawḍ al-zāhir fi sirat al-Mālik al-Zāhir, խմբ. 'Abd al-'Azīz al-Ḥuwaytīr, al-Riyād, 1976 (այսուհետև՝ Ibn 'Abd al-Zāhir, Al-Rawḍ al-zāhir):

³⁶ Ibn al-Qalānisī, Dail tariḥ Dimašq, խմբ. H. F. Amedroz, 1908, (այսուհետև՝ Ibn al-Qalānisī, Dail tariḥ Dimašq):

³⁷ Ibn al-'Ibrī, Tārīḥ muḥtaṣar al-duwal, խմբ. Anṭūn Ṣāliḫānī al-Yasū'ī, Bayrūt, 1994 (այսուհետև՝ Ibn al-'Ibrī, Tārīḥ muḥtaṣar al-duwal):

³⁸ Baybars al-Manṣūrī, Zubdat al-fikra fi tārīḥ al-hiḡra, bi-tahqīq Dunāld Rītšārdz, Bayrūt, 1998 (այսուհետև՝ Baybars al-Manṣūrī, Zubdat al-fikra):

³⁹ Baybars al-Manṣūrī (վերագրված), Muḥtār al-Aḫbār, al-Qāhira, 1993 (այսուհետև՝ Muḥtār al-Aḫbār):

⁴⁰ Ibn al-Dawādārī, Kanz al-durar wa-ḡāmi' al-ḡurar, hun. 8, al-Qāhira, 1971 (այսուհետև՝ Ibn al-Dawādārī, Kanz al-durar):

⁴¹ Իբն Բատուայ, քաղեց և թարգմանեց Հ.Աճառյան, Երևան, 1940 (այսուհետև՝ Իբն Բատուայ):

Ռուբինյաններ-Այյուբյաններ հարաբերությունների մասին⁴²: Օգտագործել ենք նաև Միքայել Ասորու երկի հայերեն թարգմանությունը (XIII դ.), որտեղ հավելյալ տեղեկություններ կան քննվող թեմայի վերաբերյալ⁴³:

Ոչ պակաս կարևոր ու հավաստի են մեկ այլ ասորի մատենագրի՝ Անանուն Եղեսացու «Ժամանակագրության» տեղեկությունները Ռուբինյանների արտաքին քաղաքականության, մասնավորապես, 1208-1209 թթ. Այյուբյան սուլթանության հետ նրանց ունեցած կապերի մասին⁴⁴:

Ատենախոսության մեջ օգտագործված ասորական աղբյուրների շարքը եզրափակում է XIII դ. պատմիչ Բար Հեբրեոսի (արաբ. Իբն ալ-Իբրի) «Ժամանակագրությունը» : Բար Հեբրեոսը լայնորեն օգտվել է Միքայել Ասորու երկից, սակայն XII դ. երկրորդ կեսի և XIII դ. իրադարձությունները ներկայացրել է ինքնուրույն՝ որպես դրանց ժամանակակից: Նա հաղորդում է Այյուբյանների, ինչպես նաև թուրքմեն ցեղապետ Ռոստոմի Կիլիկիա կատարած արշավանքների, Լևոն Բ-ի կողմից Բաղրասի 1193 թ. գրավման և հարակից այլ դեպքերի մասին: Բար Հեբրեոսը նաև ներկայացնում է Լևոն Մեծագործի մահից հետո Կիլիկիայում ու հարևան երկրներում տիրող իրավիճակը⁴⁵:

դ. լատիներեն և հին ֆրանսերեն աղբյուրներ. քննության առարկա թեմայի վերաբերյալ XII-XIII դդ. լատին հեղինակներից հիշատակելի է Գիյոմ Տյուրացին, որի երկը խաչակրաց արշավանքների գլխավոր սկզբնաղբյուրներից է: Գրքում հարուստ տեղեկություններ կան հայերի ու խաչակիրների փոխհարաբերությունների մասին⁴⁶: Լատինագիր այլ հեղինակներից ուսումնասիրության մեջ օգտագործել ենք նաև Բրոկարդոսի⁴⁷ երկը, Ամադիի ժամանակագրությունը⁴⁸, Մարինո Սանտոլոյի հեղինակած պատմագրական գործը⁴⁹, ինչպես նաև «Ուխտագնացություն դեպի Երուսաղեմ և Սուրբ Երկիր 1187-

⁴² Chronique de Michel le Syrien, ed. et tr. Par J.-B. Chabot, Bruxelles, t.III, 1963 (այսուհետև՝ Michel le Syrien).

⁴³ Ժամանակագրութիւն Տեառն Միխայելի Ասորոց պատրիարքի, Յերուսաղեմ, 1871: Օգտագործել ենք նաև 1870 թ. հրատարակությունը, տե՛ս Տեառն Միխայելի պատրիարքի ասորոց ժամանակագրութիւն, Յերուսաղեմ, 1870 (այսուհետև՝ Միքայել Ասորի, ժամանակագրութիւն, 1870, 1871):

⁴⁴ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 12, Անանուն Եղեսացի, ժամանակագրություն, թարգմանություն Լ. Տեր-Պետրոսյանի, Երևան, 1982 (այսուհետև՝ Անանուն Եղեսացի):

⁴⁵ The Chronography of Bar Hebraeus, Gregory Abu-l-Faraj, translated by E. W. Budge, Amsterdam, 1976 (այսուհետև՝ Bar Hebraeus).

⁴⁶ A History of Deeds done beyond the Sea, by William Archbishop of Tyre, v. II, translated and annotated by E. A. Babcock & A. C. Krey, New York, 1943 (այսուհետև՝ William of Tyre).

⁴⁷ Brocardus, Directorium ad Passagium Faciendum, in: Recuil des Historiens des Croisades, Documents latins et francais relatives a l'Arménie, t. II, Paris, 1906 (այսուհետև՝ Brocardus).

⁴⁸ Chroniques d'Amadi et de Strambaldi, publiées par René de Mas Latrie, Première partie, 1891:

⁴⁹ Marino Sanudo Torsello, The Book of the Secrets of the Faithful of the Cross (Liber Secretorum Fidelium Crucis), tr. by Peter Lock, Ashgate, 2011:

1291» ժողովածուն⁵⁰, որոնք անդրադառնալով հայ-լատին առնչություններին, նաև լույս են սփռում հայ-արաբական հարաբերությունների վրա:

Բացի նշված պատմական ու աշխարհագրական երկերից օգտագործվել է նաև XIII դ. լատին հեղինակ Վիլբրանդ Օլդենբուրգցու ուղեգրությունը⁵¹:

Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականության ուսումնասիրության առումով կարևոր նշանակություն ունի նաև ժամանակի կաթոլիկ եկեղեցու առաջնորդների, մասնավորապես Հռոմի Ինոկենտիոս III պապի հետ կիլիկյան աշխարհիկ ու հոգևոր վերնախավի նամակագրությունը⁵²:

Ե. բյուզանդական աղբյուրներ. բյուզանդական աղբյուրներից օգտագործվել է «Միքայել Իտալիկոսի ներբողանը»⁵³, որ հրատարակել է Ֆրանկա Ֆուսկոն:

գ. պարսկագիր հեղինակների (Իբն Բիբի⁵⁴, Ջուվայնի⁵⁵, Ռաշիդ ալ-Ռիհ⁵⁶) տվյալները կարևոր ճշգրտումներ են մտցնում հատկապես XIII դ. առաջին տասնամյակներին վերաբերող իրադարձությունների հետ կապված:

Է. վրացական աղբյուրներ. Կիլիկիա արշաված թուրքմեն ցեղապետ Ռուստամի մասին նյութեր կան նաև վրացական «Քարթլի Ցխովրեբա»-ում⁵⁷:

ը. գերմանական աղբյուրներ. Խաչակրաց երրորդ արշավանքին Կիլիկյան Հայաստանի մասնակցության հարցին է վերաբերում XIV դարի գերմանացի մի անանուն հեղինակի էպիկական պոեմը⁵⁸:

⁵⁰ Denys Pringle, *Pilgrimage to Jerusalem and the Holy Land 1187-1291* (Crusader texts in translation), Ashgate, Farnham, 2012:

⁵¹ Wilbrandi de Oldenburg, *Peregrinatio*, in: *Peregrinatores medii aevi quatuor*, Lipsiae, 1863 (այսուհետև՝ *Wilbrand de Oldenburg*), նաև *Wilbrand of Oldenburg, Journey in the Holy Land (1211-1212)* in: Denys Pringle, *Pilgrimage to Jerusalem and the Holy Land 1187-1291* (Crusader texts in translation), Ashgate, Farnham, 2012:

⁵² *Acta Innocentii PP. III (1198-1216)*, E. registris Vaticanis aliisque Eruit, introductione auxit, notisque illustravit P. Theodosius Haluščynskij hieromonachus ordinis Basiliani S. Iosaphat E pontificia commissione ad redigendum C.I.C.O., *Fontes series III*, vol. II, Vaticanis, 1944 (այսուհետև՝ *Acta Innocentii PP. III (1198-1216)*):

⁵³ Franca Fusco, *Il Panegirico di Michele Italico per Giovanni Comneno*, Athens, 1969-1970.

⁵⁴ *Recueil de Textes Relatifs à L'Histoire Des Seldjoucides par M. Th. Houtsma*, vol. III, *Histoire des Seldjoucides d'Asie Mineure d'après l'abrégé du Seldjournāmeḥ d'Ibn-Bībī*, Leide, 1902 (այսուհետև՝ *Ibn-Bībī*):

⁵⁵ Գուայնի, *Kitāb Tārīḫ-e Ğāhān-Guṣā, taṣḫīḫ-e Muḥammad Qazwīnī*, v. II, Barīl, Laydan, 1916 (այսուհետև՝ *Գուայնի*).

⁵⁶ Рашид ад-Дин, *Сборник летописей*, т. III, перевод с персидского А. К. Арендса, под редакцией А. А. Ромаскевича, Е. Э. Бертельса, и А. Ю. Якубовского, Москва-Ленинград, 1946, Рашид-ад-Дин, *Сборник летописей*, том I, книга I, пер. с персидского Л. А. Хетагурова, ред. и примечания А.А. Семенова, Москва-Ленинград, 1952:

⁵⁷ *Կարտլի Շխոքեբա. История Грузии*, под. ред. П. Метревели, Тбилиси, 2008:

⁵⁸ Friedrich Heinrich von der Hagen (Hg.), *Des Landgrafen Ludwig's des Frommen Kreuzfahrt: Heldengedicht der Belagerung von Akkon am Ende des zwölften Jahrhunderts*, Leipzig, 1854:

Հայ ուսումնասիրողներից առաջինը Կիլիկյան Հայաստանին հատուկ աշխատություն նվիրեց Ղևոնդ Ալիշանը: Նա «Սիսուան»⁵⁹ կոթողային աշխատությունում սկզբնաղբյուրային լայն հենքի վրա մանրամասն ուսումնասիրել է ոչ միայն Լևոն Մեծագործի (որը հեղինակի գլխավոր նպատակն է), այլև Կիլիկիայի հայկական պետության պատմությունը՝ հիմնադրումից մինչև 1226 թ.: «Սիսուան»-ից հետո երկար ժամանակ Կիլիկիային նվիրված հատուկ աշխատություն լույս չտեսավ, թեև Ֆրանսուա Տուրնըրի «Հայաստանի քաղաքական և կրոնական պատմությունը»⁶⁰ և Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատում»⁶¹ աշխատություններում մեծ տեղ էր հատկացված հայկական այդ պետության պատմությանը:

Իսաչակրաց արշավանքների պատմությունն ուսումնասիրող մի շարք նշանավոր արևելագետներ բազմակողմանիորեն, երբեմն նույնիսկ ամբողջ գլուխներ հատկացնելով, անդրադարձել են Կիլիկիայի պատմությանը: Օրինակ՝ նշելի են Ռոնե Գրուսեի եռահատոր հիմնարար աշխատությունը⁶², Կլոդ Կաենի Հյուսիսային Ասորիքի պատմությանը նվիրված երկը⁶³, Սթիվըն Ռանսիմենի «Իսաչակրաց արշավանքների պատմությունը»⁶⁴ և այլն:

XX դ. Կիլիկյան Հայաստանին նվիրված կարևոր ուսումնասիրություն հեղինակեց Գրիգոր Միքայելյանը: Նրա «Կիլիկիայի հայկական պետության պատմություն»⁶⁵ ընդգրկում է այդ պետության XI-XIV դդ. ամբողջ պատմությունը: Վերջին կես դարում Կիլիկիայի պատմության տարբեր հարցերին անդրադարձել են թե հայ և թե օտար մի շարք գիտնականներ: Նրանց թվում Վ. Ռուդոլֆ-Կոլենբերգը⁶⁶, Ե. Քասունին⁶⁷, Հ. Բարթիկյանը⁶⁸, Ա. Բոզոյանը⁶⁹, Կ. Մուրաֆյանը⁷⁰, Լ. Տեր-Պետրոսյանը⁷¹, Ա. Հովհաննիսյանը⁷² և ուրիշներ:

⁵⁹ Ալիշան Ղ., Սիսուան. Համագրութին հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885 (այսուհետև՝ Ալիշան Ղ., Սիսուան):

⁶⁰ Tournèze F., Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1900.

⁶¹ Օրմանեան Մ., Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հ. Ա, Բ, ս. էջմիածին, 2001:

⁶² Grousset R., Histoire des Croisades et du royaume franc de Jerusalem, ed. Perrin, Paris, t. I, 1095-1130, L'anarchie musulmane, 1934, t.II, 1131-1187, L'équilibre, 1935, t.III, 1188-1291, L'anarchie franque, 1936:

⁶³ Cahen Cl., La Syrie du Nord à l'époque des Croisades et la principauté franque d'Antioche, Paris, 1940 (այսուհետև՝ Cahen C., La Syrie du Nord).

⁶⁴ Runciman S., A History of the Crusades, vol. II (The Kingdom of Jerusalem), 1951.

⁶⁵ Микаелян Г.Г., История Киликийского армянского государства, Ереван, 1952.

⁶⁶ Rüd't-Collenberg W.H., The Rupenids, Hethumides and Lusignans, The structure of the Armeno-Cilician dynasties, Paris, 1963:

⁶⁷ Քասունի Ե., Ռուբէն Գ. իշխանապետ (1175-1187 թթ.) եւ իր կտակը, Պէրոպ, 1987:

⁶⁸ Բարթիկյան Հ., Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդական կայսրության եկեղեցական փոխհարաբերությունները և դրանց քաղաքական ծայքերը, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Ա, Երևան, 2002, էջ 642-652, Հայ-բյուզանդական նորեր, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Ա., Աճեմյան մատենաշար Գ/1, Երևան, 2002, էջ

Մեր թեմային անմիջականորեն առնչվում է սիյուդքահայ պատմաբան Երվանդ Քասունու «Ռուբէն Գ իշխանապետ (1175-1187) եւ իր կտակը» մենագրությունը:

XIII դ. առաջին տասնամյակների հայ-խաչակիր հարաբերությունների և Անտիոքի գահաժառանգության համար տարածաշրջանում ծավալված պայքարին առնչվող մի շարք հանգուցային հարցերի է անդրադարձել Լևոն Տեր-Պետրոսյանն իր «Խաչակիրները և հայերը» հիմնարար աշխատության⁷³ մեջ: Արաբական միջնադարյան պատմական երկերը Կիլիկիային վերաբերող իր հետազոտություններում լայնորեն օգտագործել է Գագիկ Դանիելյանը⁷⁴:

Օտար հեղինակներից օգտագործել ենք Ս. Հեմֆրիզի՝ Այյուբյան սուլթանության և նրա մաս կազմած տարբեր պետական կազմավորումների պատմությանը նվիրված՝ «Սալադինից մինչև մոնղոլներ. Դամասկոսի Այյուբյանները 1193-1260»⁷⁵ ծավալուն հետազոտությունը, իսկ նորագույն մենագրություններից՝ Անն-Մարի Էդդեի «Հալեպի Այյուբյանների իշխանությունը (579/1183 – 658/1260)» հիմնարար աշխատությունը⁷⁶:

47-56, Միքայել Իտալիկոսի «Ներքողյանը» և Կիլիկիայի հայոց առաջին թագավորի խնդիրը, Պատմա-բանասիրական հանդես, 1984, թիվ 4, էջ 216-229:

⁶⁹ Բոզդյան Ա., Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Երևան, 1988, Կիլիկիայի հայկական պետությունը Բյուզանդիայի կայսերական և պատրիարքական վավերագրերում (ընդհանուր ակնարկ), «Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2016, էջ 51-84:

⁷⁰ Mutafian C., La Cilicie au Carrefour des empires, t. I-II, Paris, 1988, նույնի՝ La diplomatie arménienne au Levant a l'époque des croisades XII-XIV siècle. These de doctorat, Universite Paris I, Pantheon-Sorbonne, Juin, 2002, նույնի՝ L'Armenie du Levant (XI-XIV siècle), t.I, Paris, 2012.

⁷¹ Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, Երեւան, 2007:

⁷² Հովհաննիսյան Ա., Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունները 1250-1375 թթ., Երևան, 2008:

⁷³ Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ.:

⁷⁴ Դանիելյան Գ., Ալ-Մակրիզիի Kitāb al-sulūk երկը Կիլիկյան Հայաստանի 1250-1310 թթ. պատմության սկզբնաղբյուր (աղբյուրագիտական քննություն), թեկնածուական ատենախոսություն (անտիպ), Երևան, 2015, Նույնի, «Թագավոր/թաքֆուր» տիտղոսը միջնադարյան մուսուլմանական մատենագրության մեջ, Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում, էջ 163-198, Նույնի Հռոմկլայի կաթողիկոսական աթոռի պատմության արաբական սկզբնաղբյուրները, «Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում», Երևան, 2016, 200-287 էջեր Նույնի Մամլուքյան սուլթանության և Կիլիկյան Հայաստանի հակամարտության ակունքները, Վէմ համահայկական հանդես, № 1 (49), հունվար-մարտ, 2015, էջ 141-154:

⁷⁵ Humphreys S., From Saladin to the Mongols, The Ayyubids of Damascus, 1193-1260, New York, 1977:

⁷⁶ Eddé A.-M., La Principaute Ayyoubide d'Alep, Stuttgart (579/1183 – 658/1260), Stuttgart, 1999 (այսուհետև՝ Eddé A.-M., La Principaute Ayyoubide d'Alep), նույնի՝ Saladin, translated by Jane

Բացի վերոհիշյալ մենագրություններից, օգտագործվել են նաև Ասորիքի, Իրաքի, Եգիպտոսի, Պաղեստինի պատմությանը վերաբերող մի շարք կարևոր ուսումնասիրություններ, ինչպիսիք են՝ Ն. Եյիսենի⁷⁷, Ս. Լեյն-Փոլի⁷⁸, Կ. Բոսվորտի⁷⁹, Վ. Մինորսկու⁸⁰ աշխատությունները:

Մոնղոլական դարաշրջանին վերաբերող նորագույն ուսումնասիրություններից օգտագործել ենք Դ. Բայսարխանի «Մոնղոլներն ու հայերը (1220-1335)»⁸¹ և Ռ.Ամիտայ-Պրայսի «Մոնղոլներ և մամլուքներ՝ Մամլուք-Իլխանյան պատերազմը 1260-1281»⁸² աշխատությունները:

Այսպիսով, վերոբերյալ սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների համադիր ու մանրագնին քննությամբ փորձ է կատարվել հետազոտել Կիլիկյան Հայաստանի ու Այյուբյան պետությունների փոխհարաբերությունները և, հնարավորինս, լրացնել թեմայի քննության ոլորտում եղած բացերը:

ԱՄԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, հավելվածից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 244 էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են ատենախոսության գիտական նորությունն ու կիրառական նշանակությունը, նպատակներն ու խնդիրները, ժամանակագրական շրջանակները, տրված է հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը:

ԳՐՈՒԽ ԱՌԱՋԻՆ: ՍԱԼԱԸ ԱԼ-ԴԻՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ (1171-1183)

1.1 «Իբն Լևոն» արքայատոհմն ու «Իբն Լևոնի երկիր»-ն այյուբյան շրջանի արաբ պատմագրության մեջ: Հաշվի առնելով ատենախոսության գերազանցապես արաբական աղբյուրների հիման վրա շարադրված լինելը, և այն, որ դրանցում, հատկապես խնդրո առարկա դարաշրջանին անդրադառնալիս, համատարած օգտագործվող «Իբն Լևոն» և «Իբն Լևոնի երկիր» արտահայտություններն իրենց անորոշությամբ ու երկիմաստությամբ հաճախ շփոթեցնում են ուսումնասիրողներին, նախ, քննել ենք այդ արտահայտությունները, դրանց ծագումը, իմաստային ու

Marie Todd, Cambridge, Massachusetts & London, England, 2014 (այսուհետև՝ Eddé A.-M., Saladin):

⁷⁷ Elisseff N., Nūr ad-Dīn, Un grand prince musulman de Syrie au temps des croisades (511-69H./1118-1174), tome II, Institut Français de Damas, 1967 (այսուհետև՝ Elisseff N., Nūr ad-Dīn):

⁷⁸ Lane-Poole S., A History of Egypt in the Middle Ages, London, 1901:

⁷⁹ Босворт К.Э., Мусульманские династии. Справочник по хронологии и генеалогии. Пер. с англ. П.А.Грязневича. Ответственный редактор И.П. Петрушевский. Москва, 1971:

⁸⁰ Minorsky V., Prehistory of Saladin, “Studies in Caucasian History”, London, 1953, էջ 107-157:

⁸¹ Bayarsaikhan D., The Mongols and the Armenians (1220-1335), Leiden- Boston, 2011:

⁸² Amitai-Preiss R., Mongols and Mamluks: The Mamluk-İlkhanid war, 1260-1281, Cambridge University Press, Cambridge, 1995 (այսուհետև՝ Amitai, Mongols):

ժամանակատարածքային ընդգրկումները: Արաբագիր և այլալեզու պատմագիրների առաջին ակնառու տարբերությունն այն է, որ առաջինների երկերում հազվադեպ է հանդիպում «Կիլիկիա» տեղանունը⁸³, մինչդեռ մյուս բոլոր աղբյուրներում, հետևելով հռոմեական կամ բյուզանդական ավանդույթին, «Կիլիկիա»-ն, որպես երկրի անվանում, լայնորեն օգտագործվում է: Այս սկզբնաղբյուրների քննությամբ պարզվում է, որ «Իբն Լևոն», «Իբն Լևոնի երկիր» հասկացությունները չեն վերաբերում որևէ որոշակի անձի, այլ մատնանշում են Կիլիկյան Հայաստանի XII-XIII դդ. իշխաններին ու թագավորներին:

Մնում է պարզել, թե Լևոններից որ մեկն է դարձել տոհմի անվանադիրն արաբ պատմագրության համար: Լևոն Մեծագործը որդի չունեի, հետևաբար խոսքը նրա որդու մասին չէ: «Լևոնի որդի» անվանման տակ կարող էին հասկացվել կա՛մ Թորոս Բ-ը, կա՛մ Մլեհը: Բայց Մլեհը (ինչպես և Լևոն Մեծագործը) անմիջապես հանվում են թեկնածուների ցանկից, երբ նկատի ենք ունենում, որ «Իբն Լևոն»-ն առաջիններից կիրառող Իբն ալ-Կալանիսին մահացել է 1160-ին, ուստի չգիտեր և չէր էլ կարող իմանալ ո՛չ Մլեհին, ո՛չ էլ Լևոն Մեծագործին: Աղբյուրների քննությամբ պարզվում է, որ արաբ մատենագիրները «Լևոնի որդի» ասելով նկատի են ունեցել Լևոն Ա իշխանին: Այս տեսակետը հաստատվում է նաև Աբու Շամայի (1203-1268) տեղեկություններով: Նա օգտագործում է «Լաֆուն իբն Իստիֆանա Իբն Լաուն»⁸⁴ բառակապակցությունը, այլ կերպ ասած՝ «Ստեփանեի որդի Լևոնը Լևոնյան տոհմից»: Սա մեզ հանդիպած առաջին վկայությունն է, որտեղ տրված է Հայոց արքայի թե անունը, թե հայրանունը և թե տոհմանվան արաբական տարբերակը:

Հարց է ծագում, ինչու է արաբ պատմագրությունը մեզ հայտնի տոհմը կոչել Լևոն Ա-ի և ոչ թե նրա պապի, հոր կամ եղբոր անունով: Պատճառն այն էր, որ միայն Լևոն Ա-ին հաջողվեց թելուզ և կարճ ժամանակով (1132-1137) տիրել Ղաշտային Կիլիկիային՝ իր Տարսուն, Աղանա, Մամեստիա մեծ քաղաքներով հանդերձ: Թե «Իբն Լևոն»-ը և թե՛ «Իբն Լևոնի երկիր»-ը կիրառելի են եղել XI դ. վերջերից մինչև XIII դ. 20-ական թթ.: Այս դեպքում հարց է ծագում. եթե «Իբն Լևոն» անվանումը նշանակում է «Լևոնյաններ» (հավասարագոր «Ռուփնյաններ»-ին), ապա այն ինչ կերպ թարգմանել: Կարծում ենք՝ «Իբն Լևոն», կամ «Իբն Լևոնի երկիր» արտահայտությունները պետք է ընկալել որպես քարացած ձևեր, որոնք ենթակա չեն թարգմանության: Այսինքն՝ ցանկալի է հայերեն շարադրանքում դրանք նույնությամբ պահպանել՝ օժտելով համապատասխան քաղաքություններով ու ծանոթագրություններով:

1.2 Այդպյան տոհմի ծագումն ու վերելքը: X դ. վերջին և XI դ. սկզբին Հայաստանում հաստատված արաբական (մուսուլմանական) ամիրություններում տեղի ունեցան էթնիկական փոփոխություններ. արաբներին աստիճանաբար փոխարինեցին քրդական ցեղերը: Այդ ժամանակ է, որ Շադդադյանների

⁸³ Տե՛ս **Ibn 'Abd al-Zāhir**, *Al-Rawḍ al-zāhir*, էջ 439:

⁸⁴ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, IV, էջ 79:

քրդական տոհմը հաստատվեց Հայաստանի տարբեր մասերում (Գանձակ, Անի ու Դվին)⁸⁵: Սալահ ալ-Դինի պապը՝ Շադին (Շազի), հայրը՝ Այյուբը և հորեղբայրը՝ Շիրքուիը ծնվել էին Դվինում⁸⁶: Շադին որդիների հետ, նախ, մոտավորապես 1130 թ. տեղափոխվեց Իրաք և ապա՝ Ասորիք: XIII դ. արաբագիր հեղինակ Իբն Խալլիքանը հավաստում է, որ Այյուբյանները սերում են Դվինի մոտակա Աջդանիկան կոչված գյուղից և պատկանում են ալ-Ռավվադիյյա (Ռավվադյան) քրդական ցեղին⁸⁷: Սալահ ալ-Դինը ծնվել էր Հյուսիսային Իրաքի Թիքրիթ (կամ Թաքրիթ) քաղաքում՝ մոտավորապես 1137 թ., ապա ընտանիքի հետ տեղափոխվել Մոսուլ, Բաալբեք և վերջապես Դամասկոս:

Սալահ ալ-Դինն առաջին անգամ ասպարեզում հայտնվեց 1164 թ.՝ մասնակցելով Զանգինների առաջին եգիպտական արշավանքին:

1.3 Սալահ ալ-Դինի գործունեության առաջին շրջանը (1164-1171): Ֆաթիմյան խալիֆաների իշխանությունը սկսել էր թուլանալ դեռևս XI դ., իսկ XII դ. տերության ամբողջ իշխանությունը գտնվում էր վեզիրների ձեռքում: Վերջին արշավանքի ժամանակ Սալահ ալ-Դինի հորեղբայր Շիրքուիը, հակառակորդների դիմադրությունը կոտրելով, 1169 թ. հունվարին, հաղթական մտավ Կահիրե: Ալ-Ադիդ խալիֆան (1160-1171 թթ.) Շիրքուիին նշանակեց վեզիր, սակայն կարճ ժամանակ անց նա մահացավ: Ասորիքյան բանակի զորավարների հիմնական մասը և ալ-Ադիդը հավանություն տվեցին այդ պաշտոնում Սալահ ալ-Դինի թեկնածությանը⁸⁸: Աստիճանաբար նրա դեմ ընդդիմություն ձևավորվեց, որը նա հաջողությամբ ճնշեց: 1170 թ. վերջերին Սալահ ալ-Դինը սկսեց վերացնել խաչակիրների հենակետերը Եգիպտոսի մատույցներում: Դա նրան փառք բերեց որպես Ջիհադի դրոշակակիր: Սալահ ալ-Դինը 1171 թ. փետրվարին հաղթական վերադարձավ Կահիրե: Նա այլևս Եգիպտոսի ամենազոր վեզիրն էր՝ պատրաստ վերջ դնելու Ֆաթիմյան հարստությանը⁸⁹:

1.4 Այյուբյան սուլթանության ձևավորումը (1171-1174): 1171 թ. սեպտեմբերի 13-ին Ֆաթիմյան վերջին խալիֆա ալ-Ադիդի մահից հետո Սալահ ալ-Դինը դարձավ Եգիպտոսի տերը ոչ միայն de facto, այլև՝ de jure: Ամբողջ իշխանությունն իր ձեռքը վերցնելով՝ Սալահ ալ-Դինը վճռեց վերջնականապես չեզոքացնել իր հակառակորդներին: Առաջին տուժողներից էին Եգիպտոսի հայերը: Սալահ ալ-Դինը 1171-1174 թթ. համարվում էր Նուր ալ-Դինի զորավարը, բայց նա Եգիպտոսում իշխանության էր եկել իր իսկ նախաձեռնությունների շնորհիվ և որևէ կերպ կախված չէր իր գերակայից: Այդ վիճակը պահպանվեց մինչև Նուր ալ-Դինի հանկարծախա մահը 1174 թ. մայիսի 15-ին⁹⁰:

⁸⁵ Հետագայում այդ նույն կենտրոններից (նախկին ամիրություններ) քրդերը ևս դուրս մղվեցին՝ իրենց տեղը զիջելով թյուրք տարրին:

⁸⁶ Տե՛ս **Minorsky**, *Prehistory of Saladin*, էջ 124-13:

⁸⁷ Տե՛ս **Ibn Hallikān**, *Wafāyat al-a'yān* v. VII, էջ 139-140:

⁸⁸ Տե՛ս **Eddé A.-M.**, **Saladin**, էջ 34-36:

⁸⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 45-46:

⁹⁰ Տե՛ս **Elisseeff N.**, *Nūr ad-Dīn.*, t. II, էջ 693-699:

1.5 Ռուբինյան իշխանապետության ու Այյուբյանների հարաբերությունները (1174-1183): Սկզբնական շրջանում Սալահ ալ-Դինն իրեն համարում էր Ջանգինների պետությանը հավատարիմ զորավար: Սակայն այս իրավիճակը շատ կարճ տևեց: Դրան նպաստեց Ասորիքի վերնախավը, որը Նուր ալ-Դինի որդուն 1174 թ. հուլիսի 25-ին ինքնագլուխ տեղափոխեց Հալեպ: Սրանց հակաայյուբիական դիրքորոշումը Սալահ ալ-Դինին ստիպեց դիմելու վճռական գործողությունների: Նա 1174 թ. հոկտեմբերի 24-ին Դամասկոս մտավ որպես ինքնիշխան տիրակալ:

Սալահ ալ-Դինի հիմնած պետության և Ռուբինյան իշխանապետության առաջին առնչությունները թվագրվում են Ռուբեն Գ-ի (1175-1187) իշխանության ժամանակով:

Սալահ ալ-Դինի ճնշումը տարեցտարի ավելի էր ուժեղանում, և Ջանգինների պետությունը վերածվել էր նրան ենթակա մի ամիրության (1183 թ.): Ջանգիններին ենթակա հողերի նվաճմամբ շահագրգռված խաչակիրները որոշեցին օգտվել Հարիմի տեր Գումուշտեգինի ապստամբությունից և նվաճել Ջանգինների պետության այդ մասը: Անտիոքի դուքս Բոհեմունդ III-ը (1163-1201) դիմեց Ռուբեն իշխանապետի օգնությանը, որն ընդառաջեց նրան: Որպես օգնական վերցնելով Ռուբեն իշխանապետին և Ֆլանդրիայի կոմս Ֆիլիպին՝ Բոհեմունդ III-ը 1177 թ. պաշարեց Հարիմը: Սակայն շուրջ չորս ամիս տևած (1177 դեկտեմբեր – 1178 մարտ) պաշարումն արդյունք չտվեց: Քամալ ալ-Դին Իբն ալ-Ադիմը հաստատում է, որ ամրոցը գրոհողների մեջ էր նաև «Իբն Լևոնը»⁹¹:

Սալահ ալ-Դինը 1180 թ. ամռանը երկամյա հաշտություն կնքեց Երուսաղեմի թագավորության և Տրիպոլիսի կոմսության հետ, որից հետո արշավեց Իկոնիայի սուլթանության վրա, քանի որ սելջուկները հարձակման էին ենթարկել Այյուբյաններին անցած Ռաբանը: Սելջուկները, պարտություն կրելով, ստիպված խաղաղության դաշն կնքեցին: Դրանից հետո Սալահ ալ-Դինը հասավ Բեհեսնի: Անմիջապես դրանից հետո նրա բանակը հարձակվեց Կիլիկիայի վրա⁹²: Արշավանքի համար պատրվակ ծառայեց Կըլըջ Արսլանի դիմումը Եգիպտոսի սուլթանին, որով նա խնդրում էր համաձայնություն կնքել և զանգատվում էր հայերից⁹³: Կըլըջ Արսլանի՝ հայերից դժգոհելու պատճառը, այն էր, որ Ռուբեն Գ-ը, հակառակ իր իսկ տված թույլտվությանը, հարձակվել էր Կիլիկիայում իրենց հոտերն արածացնող թուրքմեն ցեղերի վրա, մի մասին կոտորել, իսկ մնացածներին գերել ու տիրացել նրանց ունեցվածքին⁹⁴: Իմադ ալ-Դին ալ-Իսֆահանի պատմիչը հաղորդում է հայերի հարձակումների մասին ապա նկարագրում է թե ինչպես Սալահ ալ-Դինի զինվորները ճամբար խփեցին Սև

⁹¹ Ibn al-Adim, Zubdat al-Halab, t. III, p. 36-38:

⁹² Stéu Cahen Cl., La Syrie du Nord, էջ 420:

⁹³ Stéu Ibn Khallikan, Biographical Dictionary, v. III, էջ 342, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 293:

⁹⁴ Stéu Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 301, Իբն ալ-Ասիր, էջ 266:

գետի ափին, մոտեցան Ամանոսյան լեռներին հասնելով անառիկ մի բերդի⁹⁵: Ըստ պատմիչի՝ հայերը բերդը կրակի են տալիս, որպեսզի այն մուսուլմանների ձեռքը չընկնի: Բայց վերջիններս վրա են հասնում և հաջողացնում դատարկել հրդեհվող ամրոցի հացահատիկի ամբարներն ու պահեստները: Ըստ աղբյուրի՝ Ռուբեն Գ-ը հնազանդություն հայտնեց և ազատեց մուսուլման գերիներին: Դրանից հետո Սալահ ալ-Դինը վճռում է վերադառնալ՝ պատճառաբանելով, որ ժամանակը սուղ է: Ականատես պատմիչ Իբն Շադդադի վկայությամբ կողմերի միջև հաշտություն է կնքվել⁹⁶:

Սալահ ալ-Դինի արտաքին քաղաքականության մեջ Կիլիկիայի հայկական պետությունն առանձնահատուկ տեղ էր գրավում: Սալահ ալ-Դինի տերության համար (համենայն դեպս XII դ. 70-80-ական թթ.) առաջնահերթ խնդիր չէր հայկական իշխանապետության վերացումը կամ նրան ջախջախիչ հարված հասցնելը: Սալահ ալ-Դինը չչարունակեց առաջխաղացումը դեպի Ռուբինյան իշխապետության ներքին գավառները, նաև որովհետև վճռական հաջողությունների չէր հասել խաչակիրների դեմ պայքարում, իսկ Հյուսիսային Ասորիքը և Վերին Միջագետքը դեռևս վերջնականապես նվաճված չէին:

1183 թ. հունիսին տիրելով Հալեպին՝ Սալահ ալ-Դինը վտանգավոր էր դառնում նաև Կիլիկիայի համար, թեև 1180 թ. կնքած հաշտությունը Կիլիկիայի հայերին գոնե ժամանակավորապես զերծ էր պահում Այյուբյան բանակի ներխուժումից: Ռուբինյանների հետ հաշտությունն Այյուբյանները պահպանեցին առնվազն մինչև 1187 թ.:

ԳՆՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ: ԱՅՅՈՒԲՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՌՈՒԲԻՆՅԱՆ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (1183-1193)

2.1 Ասորիքի վերջնական նվաճումը: Այյուբյանների կողմից Հալեպի գրավումը Կիլիկյան Հայաստանի համար բոլորովին նոր իրավիճակ ստեղծեց: Այյուբյան հզոր սուլթանությունը հայտնվեց հայկական իշխանապետության անմիջական հարևանությամբ:

Սալահ ալ-Դինի հետ 1180 թ. կնքած պայմանագրից հետո՝ նույն տասնամյակի առաջին կեսին, օգտվելով հաստատված հարաբերական անդորրից, Ռուբեն Գ իշխանը փորձում էր ընդարձակել իր տիրույթները: Ռուբեն Գ-ի իշխանության վերջին երկու տարիների վերաբերյալ աղբյուրների տեղեկություններն աղքատիկ են: Մեզ հետաքրքրող նյութի շուրջ միակ ուշադրության արժանի հաղորդումը վերաբերվում է նրա և Գրիգոր Դ Տղա (1173-1193 թթ.) կաթողիկոսի կողմից Եգիպտոս ուղարկված պատվիրակությանը: Չի բացառվում, որ սա մի փորձ էր բարելավելու Եգիպտոսի հայ համայնքի վիճակը: Ուշագրավ է, որ պատվիրակությունն իր հետ տանում էր Սալահ ալ-Դինի ու նրա եղբոր նամակները՝ ուղղված Եգիպտոսի փոխարքային: Այն հանգամանքը, որ Սալահ ալ-Դինը բարեխոսական մի ուղերձ էր գրել, ցույց է տալիս, որ 1180 թ.

⁹⁵ Al-Bundarī, Sanā al-barq al-Šāmī, p. 177:

⁹⁶ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 293:

հետո, անցած հինգ-վեց տարիների ընթացքում Կիլիկյան Հայաստանի իշխանապետն ու Հայոց կաթողիկոսը կարողացել էին բարիդրացիական կապեր հաստատել Այյուբյանների հետ, իսկ Սալահ ալ-Դինն էլ որոշել էր մեղմացնել իր վերաբերմունքը⁹⁷:

Այյուբյան սուլթանության բանակը 1187 թ. հոկտեմբերի 2-ին գրավեց Երուսաղեմը: Սալահ ալ-Դինը կարճ ժամանակում նվաճեց գրեթե ամբողջ Պաղեստինը:

2.2 Թուրքմենների արշավանքը և Այյուբյանների Կիլիկիա ներխուժելու երկրորդ փորձը 1187 թ.: Լևոն Բ-ի իշխանության առաջին տարում Կիլիկիայի վրա կատարվեց երկու արշավանք՝ մեկը Ռոստոմի գլխավորած թուրքմենական ցեղերի, մյուսը՝ Սալահ ալ-Դինի ասորիքյան մի զորաջոկատի կողմից: Հիշյալ արշավանքների վերաբերյալ ուսումնասիրողների կարծիքները տարամիտվում են: Վերջինից թերևս, ճիշտ է Գրիգոր Միքայելյանը՝ Ռոստոմի արշավանքը թուրքմենների և քրդերի միջև տեղի ունեցած ընդհարումների հետ կապելով⁹⁸: Միքայել Ասորու հաղորդմամբ՝ թուրքմենները, Մոսուլի և Մծբինի կողմերում երկու անգամ ջախջախելով քրդական ցեղերին, այնուհետև սկսեցին հետապնդել պարտված թշնամուն և ներխուժեցին Կիլիկիայի լեռնային շրջաններ⁹⁹: Որ Ռոստոմը որևէ պետություն չէր ներկայացնում և արշավանքն էլ ուղղված չէր հատկապես Կիլիկյան Հայաստանի դեմ, երևում է Բար Հեբրեոսի հաղորդումից¹⁰⁰: Պատմիչների տվյալների համադրումը ցույց է տալիս որ Ռոստոմի գլխավորած թուրքմենների թվաքանակը 5000-10000 էր, որի դեմ Լևոն Բ-ը դուրս եկավ փոքրաթիվ ուժերով ու վճռական հաղթանակ տարավ:

Առանց սկզբնաղբյուր վկայակոչելու՝ Գրիգոր Միքայելյանը միանգամայն իրավացիորեն առանձնացնում է Ռոստոմի արշավանքն ու Սալահ ալ-Դինի զորաջոկատի ներխուժումը: Վերջին արշավանքի իրողությունը շատ հավանական է, քանի որ հենց նույն՝ 1187/1188 թ. էր, որ Տրիպոլիսի կոմսությունն ու Անտիոքի իշխանապետությունը ենթարկվեցին Սալահ ալ-Դինին¹⁰¹: Վերջինս 1187-1188 թթ. գրեթե ամբողջությամբ նվաճել էր Անտիոքի իշխանապետությունը, բացի գլխավոր քաղաքից, որը պաշարված վիճակում էր: Սալահ ալ-Դինը մշտապես մի հսկիչ զորագունդ էր պահում Անտիոք քաղաքի մատույցներում: Այս վերջին հանգամանքը, անշուշտ, կարող էր նպաստել Անտիոքի տարածքով Այյուբյանների ազատ տեղաշարժին: Չի բացառվում, որ Կիլիկիայի վրա հարձակվել է հենց այդ հսկիչ զորագունդը: Թերևս, այս արշավանքի մասին է ակնարկում և Քամալ ալ-Դին Իբն ալ-Ադիմը՝ գրելով, որ Սալահ ալ-Դինը Դամասկոսից Հալեպ եկավ, որ

⁹⁷ Տե՛ս The Churches and Monasteries and Some Neighbouring Countries attributed to Abū Šālih The Armenian, էջ 10-11, ինչպես նաև **Ալիշան**, Աբուսահլ Հայ, էջ 31 և հատկապես՝ **Abū al-Makārim**, էջ 5:

⁹⁸ Տե՛ս Микаелян Г.Г., նշվ. աշխ., էջ 141-142:

⁹⁹ Տե՛ս Michel le Syrien, t. III, էջ 401:

¹⁰⁰ Bar Hebraeus, p. 328:

¹⁰¹ Lane-Poole S., History of Egypt in the Middle Ages, p. 208:

զորահավաք կատարի, սակայն զորքը ուշացավ, քանի որ զբաղված էր ֆրանկների դեմ կռվելով Անտիոքի հողում և «Իբն Լևոնի» երկրում:

2.3 Կիլիկիան Ֆրիգիի Շիկամորուսի և Սալահ ալ-Դինի հակամարտության կիզակետում: Երուսաղեմի անկման լուրը ծանր տպավորություն թողեց Եվրոպայում՝ ծառայելով Խաչակրաց երրորդ արշավանքի (1189-1192) առիթ: Սալահ ալ-Դինի նվաճումների հետևանքով Մերձավոր Արևելքի խաչակրաց պետությունները դադարել էին ռազմաքաղաքական զորեղ գործոն լինելուց, մինչդեռ Այյուբյանների հարվածներից հնարավորինս զերծ մնացած Ռուբինյան իշխանապետությունն ունակ էր ստանձնելու խաչակրության հենակետի խիստ կարևոր դերը: Այս ամենը քաջ գիտակցում էին ինչպես Հռոմի պապական կուրիայում, այնպես էլ Ֆրիգիի I Շիկամորուսի արքունիքում:

Ցամաքային ճանապարհով Երուսաղեմ շտապող Ֆրիգիի Շիկամորուսը, որը պետք է անցներ Կիլիկիայով, Իկոնիայից նամակներ է ուղարկում Լևոն Բ-ին և Գրիգոր Դ Տղային՝ հայտնելով, որ թագ է բերում հայոց իշխանի համար¹⁰²: Ակնհայտ է, որ նախկինում Եվրոպա ուղարկված նամակներում կաթողիկոսը կամ իշխանապետը (կամ երկուսն էլ) արծարծել են Կիլիկիայի անկախության ճանաչման ու Լևոնի թագադրման հարցը: Սակայն Բարբարոսսան շուտով խեղդվում է Սելևկիա գետում՝ այդպես էլ չհասցնելով իր նշած թագը փոխանցել:

Այս բոլոր անցքերի նկարագրության մեջ այլալեզու պատմիչների հաղորդումները հիմնականում նույնն են կամ լրացնում են միմյանց: Հիմնական վիճելի հարցը, որի շուրջ վերջին ավելի քան 200 տարում ուսումնասիրողները տարամիտվում են Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի՝ Սալահ ալ-Դին Այյուբիին հղած 1190 թվակիր նամակն է (կամ նամակները): Այդ մասին հիշատակում են միայն արաբ պատմիչները, որոնց թվում առանձնանում է XII-XIII դդ. նշանավոր դատավոր Բահա ալ-Դին Իբն Շադդադն իր «Սալահ ալ-Դին Այյուբիի կենսագրությունը» գրքի մանրամասն տեղեկություններով¹⁰³:

Կաթողիկոսի նամակում, որն առկա է սույն երկում, նկարագրվում է Ֆրիգիի Շիկամորուսի բանակի առաջխաղացումը մինչև Կիլիկիա, նրանց բախումները բյուզանդացիների, թուրքմենների և Իկոնիայի սելջուկների հետ: Գրիգոր Տղան ամեն կերպ աշխատում է իրեն ու Լևոն Բ-ին ներկայացնել որպես Սալահ ալ-Դինի բարեկամ և դաշնակից¹⁰⁴: Ուսումնասիրողների մի մասն այն համարել է կեղծիք, հորինվածք, պատմիչի կողմից իրական հեղինակին կաթողիկոսի հետ շփոթելու հետևանք, իսկ մյուս մասը, ընդունելով հանդերձ նամակի իսկությունը, առաջ է քաշել դրա գրության իրարամերժ դրդապատճառներ ու նպատակներ: Այս բազմակարծության մեջ կողմնորոշվելու և դրա խորքային պատճառները հասկանալու համար անհրաժեշտ է պարզել արմատները: Երկար ժամանակ Եվրոպայում տիրապետող է եղել հայ-խաչակիր զինակցությունն իդեալականացնելու, որպես հովվերգություն ներկայացնելու մի

¹⁰² Վարդան վարդապետ, էջ 136:

¹⁰³ Տե՛ս **Ibn Šaddād**, Kitāb al-Nawādir, էջ 182-186:

¹⁰⁴ Տե՛ս Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 294-297:

սովորություն, որը, անկասկած, իր դրոշմն է թողել նաև Կիլիկյան Հայաստանի պատմության ուսումնասիրության վրա: Միքայել Չամչյանցը, Ղևոնդ Ալիշանը, Ֆրանսուա Տուրնըբիզը, մասամբ նաև Ռընե Գրուսեն¹⁰⁵ և ուրիշներ, այս կամ այն չափով տուրք են տվել «գովերգումի» այս տեսությանը՝ հաճախ նաև մեկը մյուսին հետևելով: Սակայն կասկածից դուրս է, որ մի շարք արաբ պատմիչների կողմից հիշատակվող իրադարձությունները լույս են սփռում Կիլիկիա-խաչակիրներ և Կիլիկիա-Այյուբյաններ փոխհարաբերությունների վրա, իսկ նամակը կարող է համարվել հայ միջնադարյան դիվանագիտության եզակի նմուշ: Կասկած չկա, որ Լևոն Բ-ն ու Գրիգոր Դ-ը մշակել էին գործողությունների միասնական ծրագիր, որով առաջնորդվելով՝ ջանացել էին Կիլիկիան նվազագույն կորուստներով դուրս բերել վտանգավոր իրավիճակից:

Կիլիկյան իշխանությունները գերադասեցին չեզոք դիրք գրավել երկու հզոր ուժերի միջև՝ Սալահ ալ-Դինի հետագա հնարավոր հակահարվածը կանխելու համար: Ավելին, ստեղծված իրավիճակում Լևոն Բ-ը ոչ միայն պահպանեց իր իշխանապետության դիրքերը, այլև նոր հողեր գրավեց: Նա մասնավորապես 1191 թ. տիրացավ Սալահ ալ-Դինի բանակի կողմից լքված Բաղրաս (Գաստոն) ամրոցին, որը ռազմավարական շատ կարևոր դիրք ուներ¹⁰⁶:

2.4 Սալահ ալ-Դինի գործունեության վերջին շրջանը. 1193 թ. արշավանքը: 1192 թ. Ռամլայի հաշտությամբ Մերձավոր Արևելքում կրկին դրության տեր դարձավ Սալահ ալ-Դինը, որի տերությունը ձգվում էր Հայկական Տավրոսի լեռներից մինչև Լիբիական անապատը: Նա վերջնականապես թուլացրել էր խաչակիրներին՝ նրանց թողնելով միայն ծովափնյա մի նեղ շերտ: Այյուբյանները նախատեսում էին գրավել Իկոնիայի սուլթանությունը, Մեծ Հայքի հարավ-արևմուտքը, Ատրպատականը և մինչև իսկ Իրանը: Փոքր Ասիան նվաճելու ճանապարհին ամենայն հավանականությամբ պիտի վերացվեր նաև Ռուբինյան իշխանապետությունը:

Ըստ Սմբատ Սպարապետի՝ իր իշխանության վերջին տարում (1193 թ.) Սալահ ալ-Դինը պատվիրակ է ուղարկում Լևոն Բ-ի մոտ՝ պահանջելով հանձնել Կիլիկիան և անձամբ ներկայանալ իրեն: Լևոնը, հաշտության հնարավորություններ չտեսնելով և մի կողմ թողնելով դիվանագիտությունը, հետևյալ պատասխանն է տալիս սուլթանի պատվիրակին. «Ասա ցուլտանն թէ երկիր ոչ ունիմ տալ քեզ, բայց եթէ գայցես յերկրիս իմում տաց քեզ յերկայրից ըմպելիս, որպէս հաատակցին քո Ըռըստոմի»¹⁰⁷: Այսպիսի համարձակ պատասխան ստանալով՝ Սալահ ալ-Դինը, որը, ըստ Սմբատ Սպարապետի, «մոմէր որպես գառիւծ»¹⁰⁸, զորքով հարձակվում է Կիլիկիայի վրա, բայց Սև գետի

¹⁰⁵ Grousset R., Histoire des Croisades, t. III, pp. 59-60:

¹⁰⁶ Տե՛ս **Lawrence**, Castle of Baghras, “The Cilician Kingdom of Armenia”, ed. by T.S.R. Boase, Scottish Academic Press, Edinburgh & London, 1978, էջ 44 և **Edwards R. W.**, Bağras and Armenian Cilicia: A reassessment, “Revue des Etudes Armeniennes”, t. XVII, 1983, էջ 417-418:

¹⁰⁷ **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, 1956, էջ 204:

¹⁰⁸ Նույն տեղում:

մոտ սուլթանը հանկարծակի հիվանդանում է ու մահանում: Արաբ հեղինակները հստակ նշում են, որ Այյուբյան հզոր տիրակալը մահացել է Դամասկոսում՝ իր մահճում¹⁰⁹, ուստի, ամենայն հավանականությամբ, 1193 թ. Կիլիկիայի վրա արշավել է ոչ թե անձամբ Սալահ ալ-Դինը, այլ նրա զորավարներից մեկը: Նման մի արշավանք, թեկուզ հետախուզական նպատակներով իրականացված, լիովին համապատասխանում էր Այյուբյանների վերոբերյալ նվաճողական ծրագրին: Արշավանքը, ըստ երևույթին, ընդհատվել է, երբ զորքի հրամանատարին հասել է Սալահ ալ-Դինի մահվան լուրը:

Սալահ ալ-Դինը, մահվանից առաջ իր տերությունը բաժանեց 4 մասի՝ դրանք հանձնելով իր բազմաթիվ որդիներից 3-ին և եղբորը: Զավակներից ալ-Աֆղալն ստացավ Հարավային Ասորիքը և Պաղեստինը, ալ-Ազիզը՝ Եգիպտոսը, ալ-Մալիք ալ-Զահիրը՝ Հյուսիսային Ասորիքը: Եղբորը՝ ալ-Մալիք ալ-Ադիլին բաժին հասավ Վերին Միջագետքը: Զարմանալի չէ, որ տոհմի անդամների միջև սկսվեց դաժան հակամարտություն, որը շարունակվեց մինչև XII դ. վերջը: Այյուբյան սուլթանության տրոհումն այն պայմաններից մեկն էր, որը նպաստեց XII դ. վերջին (1198 թ.) Կիլիկիայի հայկական թագավորության հռչակմանը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ: ԱՆՏԻՈՔԻ ԳԱՀԱԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՎ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՅՅՈՒԲՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1194-1216)

3.1 Անտիոքի գահաժառանգության խնդիրը և Տրիպոլիս-Հալեպ-Իկոնիա հակակիլիկյան դաշինքի ձևավորման նախաքայլերը:

Այյուբյանների սպառնալիքից ազատվելուց հետո Անտիոքի դուքս Բոհեմունդ III-ը Կիլիկիան Անտիոքին ենթարկելու հերթական փորձը կատարեց: Նա, Լևոն Բ-ին ձերբակալելու նպատակով, խաբեությամբ 1193 թ. հրավիրեց Անտիոք: Նախօրոք տեղեկանալով այդ մասին՝ Լևոն Բ-ը խուսափեց եղբոր՝ Ռուբենի սխալը կրկնելուց: Նա ոչ միայն չզնաց Անտիոք, այլև ինքը ծուղակի մեջ գցեց Բոհեմունդին¹¹⁰: Անտիոքի իշխանը գերությունից ազատվեց Ռուբինյան իշխանապետությանն արված զիջումների դիմաց: Հաշտության մի կետով Բոհեմունդի որդին՝ Ռայմոնդը, ամուսնացավ Լևոնի եղբայր՝ Ստեփանեսի դուստր Ալիսի հետ: Նրանցից ծնված Ռայմոնդ-Ռուբենը հետագայում Լևոն Բ-ի կողմից հռչակվեց գահաժառանգ¹¹¹: Սաի 1194 թ. պայմանագրից հետո Լևոն Բ-ը կրկին ձեռնամուխ եղավ թագավորության հռչակման գործին՝ արդեն 1197 թ. ակտիվ բանակցություններ սկսելով Հռոմի պապի և Հռոմեական սրբազան կայսրության ինքնակալի հետ: Հաջող բանակցությունների արդյունքում Լևոնը թագ ստացավ ոչ միայն Հռոմեական սրբազան կայսրության ինքնակալից, այլև Բյուզանդիայի կայսրից և Տարսուհի ս. Սոփիա եկեղեցում 1198 թ. հունվարի 6-ին հանդիսավորապես օծվեց «Թագավոր Հայոց»¹¹²:

¹⁰⁹ Տե՛ս Իմադ ալ-Դին ալ-Իֆահանի, Կիտաբ ալ-Բաթ, էջ 454-455:

¹¹⁰ Տե՛ս Bar Hebraeus, էջ 343-344:

¹¹¹ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, 1956, էջ 204:

¹¹² Նույն տեղում, էջ 208:

Սալահ ալ-Դինի եղբայր ալ-Ադիլը, որին բաժին էր հասել հսկա տերության չորս մասերից մեկը, օգտվելով իր եղբորորդիների միջև ծագած ներդինաստիական պայքարից (1196-1199), մեկ պետության մեջ միավորեց Եգիպտոսը, Հարավային Ասորիքը, Պաղեստինը, Վերին Միջագետքը և սրանց հարակից որոշ շրջաններ: Սուլթանի որդիներից միայն ալ-Մալիք ալ-Զահիրը, կարողացավ հորեղբոր գերագահությունն ընդունելու գնով, պահպանել իր իշխանությունը Հյուսիսային Ասորիքում՝ Հալեպ կենտրոնով:

1201 թ. սկսած՝ քաղաքական մթնոլորտը սկսեց շիկանալ Ասորիքի հյուսիս-արևմուտքում՝ Անտիոքի շրջանում, որին տիրելու համար Իկոնիայի Սելջուկյան սուլթանության, Կիլիկիայի հայկական թագավորության, Անտիոք-Տրիպոլիսի կոմսության և Հալեպի Այյուբյան սուլթանության միջև ծավալվեց տևական պայքար:

Կիլիկիայի հայկական թագավորության հռչակումից հետո Լևոն Ա-ը պետության դիվանագիտական ու ռազմական հիմնական ներուժը ծառայեցրեց Անտիոքի գահաժառանգման խնդրի լուծմանը: Անտիոքի նկատմամբ Կիլիկյան Հայաստանի հավակնությունները հակառակ էին ոչ միայն Տրիպոլիսի կոմսության, այլև Իկոնիայի և Հալեպի սուլթանությունների շահերին: Հարևանները խիստ անհանգստացած էին հայկական նորահռչակ թագավորության հզորացմամբ, ինչն էլ կանխելու նպատակով ձևավորեցին Տրիպոլիս-Իկոնիա-Հալեպ հակակիլիկյան դաշինքը: Վերջինիս դեմ պայքարելու նպատակով Լևոն Մեծագործը ակտիվ նամակագրություն սկսեց Հռոմի պապ Ինոկենտոս III-ի հետ՝ նրան հավաստիացնելով, որ Կիլիկիայի տարածքում գտնվող ասպետական միաբանությունները նկատելիորեն խոչընդոտում են Երուսաղեմի շուտափույթ ազատագրմանը¹¹³:

3.2 Կիլիկիայի հայկական թագավորության և Հալեպի սուլթանության միջև 1203-1206 թթ. պատերազմը: Անտիոք-Տրիպոլիսի կոմսության և Կիլիկիայի թագավորության զորքերի միջև առաջին զինաբախումները սկսվեցին 1201 թ.¹¹⁴: Ամենայն հավանականությամբ, նույն թվականին, Հալեպի սուլթանությունը ևս օժանդակեց Բոհեմունդին¹¹⁵: Պատերազմական գործողություններն առավել ակտիվ կերպով շարունակվել են 1203 թ. վերջերից: Նույն ժամանակ Կիլիկիայի թագավորության և Հալեպի սուլթանության միջև սկսվում է ռազմական հակամարտություն: Այն թեև «Անտիոքյան պատերազմի» բաղկացուցիչ մասն է, բայց կարող է դիտվել նաև որպես առանձին պատերազմ:

Երկու հակառակորդների դեմ միաժամանակ պայքարելը կարող էր ծանր հետևանքներ ունենալ Կիլիկիայի համար: Թերևս այդ է պատճառը, որ Լևոն Մեծագործը որոշում է ժամանակավորապես դադարեցնել Բոհեմունդ IV-ի դեմ պայքարը և ասպարեզից հեռացնել նրա ամենամոտ դաշնակցին՝ ալ-Մալիք ալ-Զահիրին: Այս պատերազմի մասին հայ պատմիչները (բացառությամբ Կիրակոս

¹¹³ Acta Innocentii PP. III (1198-1216), p. 557:

¹¹⁴ Նույն տեղում, էջ 559-562:

¹¹⁵ Տե՛ս Cahen Cl., *La Syrie du Nord*, էջ 600-601:

Գանձակեցու) գրեթե ոչինչ չեն հաղորդում: Ուսումնասիրողները ևս կամ անտեսել, կամ խիստ հպանցիկ են անդրադարձել դրան: Փոխարենը, այդ մասին առատ տեղեկություններ են պարունակում արաբ պատմիչների (Իբն ալ-Ադիմ, Իբն Վասիլ, Իբն ալ-Ասիր, Աբու Շամա, Իբն ալ-Ֆուրաթ) երկերը: Նրանց տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ թեև ռազմական գործողությունները Հայոց թագավորության համար ընդհանուր առմամբ հաջող էին ընթանում և Լևոն Ա-ը նաև հաղթանակներ էր տանում, սակայն թե Այյուբյան «համադաշնության» մեջ և թե նրանից դուրս հակակիլիկյան համախմբումն այնքան մեծ էր, որ Լևոն Ա-ը ստիպված էր որոշ զիջումներով հաշտություն ստորագրել: Հաշտությունը կնքվում էր ութ տարի ժամկետով: Կիլիկյան Հայաստանի և Հալեպի սուլթանության միջև 1203-1206 թթ. եռամյա պատերազմը, ամենայն հավանականությամբ, չհանգեցրեց տարածքային փոփոխությունների: Բաղրասը մնաց հայերի, իսկ Դարպասկը՝ Այյուբյանների ձեռքում: Դրանից հետո Լևոն Մեծագործը բարեկամական հարաբերություններ հաստատեց Մերձավոր Արևելքի հզոր տիրակալի՝ Եգիպտոսի Այյուբյան գերագահ սուլթան ալ-Մալիք ալ-Ադիլի հետ, ինչը նրան օգնեց Անտիոքի գահաժառանգման համար մղվող ծանր պայքարում:

3.3 Լևոն Ա-ի դիվանագիտական ջանքերն ընդդեմ Տրիպոլիս-Հալեպ-Իկոնիա հակակիլիկյան դաշինքի (1208-1209): Ալ-Մալիք ալ-Ադիլի միջամտությունը: 1206 թ. ժամանակավորապես ազատվելով վտանգավոր հակառակորդից, Լևոն Ա-ը հնարավորություն ստացավ վերսկսելու զինված պայքարն Անտիոքի համար՝ ստիպված չլինելով պատերազմել միաժամանակ երեք ճակատով: Հայտնվելով թշնամական օղակի մեջ՝ Կիլիկիայի վերնախավը դիմեց վճռական քայլերի՝ փորձելով պայքարի մեջ ներգրավել այնպիսի ուժերի, որոնք իրենց ռազմաքաղաքական հզորությամբ կամ հեղինակությամբ ի վիճակի էին ազդել հակակիլիկյան դիրքորոշում որդեգրած պետությունների վրա: Ռայմոնդ-Ռուբենի հանդեպ Պապի դրական դիրքորոշումը, անշուշտ, խաղում էր որոշակի դեր, սակայն արդեն 1208 թ. Լևոն Ա-ի համար ակնհայտ էր, որ կաթոլիկ եկեղեցու առաջնորդի միջամտությունը բավարար չէ իր խնդիրները լուծելու համար:

1208 թ., Լևոն Ա-ին ժամանակավորապես հաջողվեց գրավել Անտիոքը, որից խիստ անհանգստացած ալ-Մալիք ալ-Չահիրն օգնության խնդրանքով դիմեց Իկոնիայի ու Եգիպտոսի սուլթաններին: Իկոնիայի սուլթանության զորքերն 1208-1209 թթ. արշավանքներ կատարեցին Հայոց թագավորության դեմ և տիրացան մի շարք սահմանային ամրությունների¹¹⁶: Հռոմի պապից օգնություն ստանալու հույսը կորսված համարելով՝ Լևոնը 1208/1209 թ. դիմեց Եգիպտոսի Այյուբյան սուլթանի աջակցությանը՝ փորձելով նրա միջոցով կանխել Իկոնիայի և Հալեպի սուլթանությունների համատեղ ռազմարշավներն իր թագավորության դեմ: Ալ-Ադիլի հետ Լևոն Ա-ի նախաձեռնած նամակագրության և արձանագրված դրական

¹¹⁶ Տե՛ս Ibn al-Adim, Zubdat al-Halab, t. III, էջ 159:

արդյունքների մասին բացառիկ կարևոր տեղեկություններ է հաղորդում Քամալ ալ-Դին Իբն ալ-Ադիմը¹¹⁷, ինչպես նաև Իբն Վասիլը¹¹⁸ և Անանուն Եղեսացին¹¹⁹:

Փաստորեն, անսալով Կիլիկիայի թագավորի խնդրանքին՝ ալ-Մալիք ալ-Ադիլը նամակներ գրեց Քեյ Խոսրովին և ալ-Մալիք ալ-Չահիրին՝ համոզելով, որ նրանք հաշտություն կնքեն Կիլիկյան Հայաստանի հետ, ինչն իրականացավ: Ըստ հաշտության՝ Լևոն թագավորը պետք է Բաղրասը հանձներ Տաճարականներին, չմիջամտեր Անտիոքի գործերին և վերադարձներ Քեյ Խոսրովի՝ Կիլիկիայում ի պահ տրված ունեցվածքը:

Իսկ ինչն էր հույս տալիս Լևոնին, որ իր դիմումը կարող է դրական արձագանք ստանալ: Նախ, չի բացառվում, որ սա Լևոն Ա-ի՝ Այյուբյաններին ուղղած առաջին գրությունը չէր: Ալ-Մալիք ալ-Ադիլը, անշուշտ, չէր կարող նպաստել հայերի կողմից Անտիոքի գրավմանը, բայց և իր պետության շահերին դեմ էր Իկոնիայի սուլթանության չափից ավելի հզորացումը: Բացի այդ, Լևոն Մեծագործը հավանաբար լավ տեղյակ էր ալ-Մալիք ալ-Չահիրի և նրա հորեղբոր՝ ալ-Մալիք ալ-Ադիլի հարաբերություններին: Այդ տարիներից սկիզբ է առնում Լևոն թագավորի բազմաբևեռ արտաքին քաղաքականությունը, որը շուտով դրական արդյունքներ է արձանագրում:

3.4 Հայկական բանակի կողմից Անտիոքի գրավումը (1216): Եգիպտոսի սուլթանության գործունը: 1216 թ. փետրվարի 14-ին Լևոն Մեծագործը գրավեց Անտիոքը և այս անգամ արդեն ավելի երկար ժամանակով գահին բազմեցրեց Ռայմոնդ-Ռուբենին: Անտիոքի գրավումը ռազմաքաղաքական խոշորագույն ձեռքբերում էր: Սա նաև դիվանագիտական խոշոր հաղթանակ էր: Առաջին հերթին ճիշտ էր ընտրված Անտիոքի նվաճման պահը: Սկսվել էր Խաչակրաց հինգերորդ արշավանքը (1213-1221 թթ.), հետևաբար, հույս կար, որ Հալեպը չէր կարող ամեն ադիթով օգնության հասնել Բոհեմունդ IV-ին: Այնուամենայնիվ, Անտիոքին տիրելուց հետո Լևոն Ա-ն այնտեղ եղած գերի մուսուլմաններին անմիջապես ուղարկեց Հալեպ՝ կանխելով ալ-Մալիք ալ-Չահիրի հավանական միջամտությունը¹²⁰: Լևոնի այս քայլը, ինչպես նաև նրա և Եգիպտոսի սուլթանի գործակցությունը զսպեցին Հալեպի սուլթանին՝ կանխելով վերջինիս միջամտությունը: Անտիոքի գրավման լուրը, այդուհանդերձ, խուճապ առաջացրեց Հալեպում: Ալ-Մալիք ալ-Չահիրը դիմեց Իկոնիայի սուլթան Քեյ Քաուսին և Եգիպտոսի սուլթան ալ-Մալիք ալ-Ադիլին՝ կոչ անելով ընդդեմ Լևոն Ա-ի թագավորության միացյալ արշավանքի: Այս անգամ նա այլևս ալ-Մալիք ալ-Ադիլի հետ մեծ հույսեր չէր կարող կապել, քանզի ինչպես գրում է Իբն ալ-Ադիմը Լևոն թագավորն իր հորեղբոր հովանու տակ էր¹²¹:

¹¹⁷ Խոսքն այն ունեցվածքի մասին է, որ Քայխոսրովը թողել էր Կիլիկիայում, երբ իր երկրից արքորված վիճակում էր (Նախքան 1204 թ.):

¹¹⁸ Ibn Wāsil, Mufattiḡ al-kurūb, v. 3, p. 187:

¹¹⁹ Անանուն Եղեսացի, էջ 172:

¹²⁰ Ibn Wasil, v. III, p. 233:

¹²¹ Ibn al-Adim, Zubdat al-Halab, t. III, pp. 168-169:

Արաբ պատմիչների տեղեկություններից կարելի է մակաբերել, որ Լևոն Ա-ի և ալ-Ադիլի գործակցությունը 1208-1216 թթ. ու հավանաբար նաև հետագա տարիներին, եղել է տևական: Լևոն Ա-ը ձգտում էր ալ-Ադիլի հետ գործակցելով, զսպել նրա եղբորորդուն, դրանով իսկ չեզոքացնելով հակակիլիկյան եռյակ դաշինքի հանգուցային անդամին:

Այս անգամ Հալեպի Այյուբյանները խուսափեցին հարձակվել հայկական ուժերի վրա, քանզի ոչ միայն չստացան Եգիպտոսի աջակցությունը, այլև կարող էին հարուցել գերագահ սուլթանի զայրույթը՝ նրա մտերիմ միապետի դեմ պատերազմ սկսելով: Հալեպի սուլթանության հնարավոր հարձակումը վերջնականապես կանխելու նպատակով Լևոն Ա-ը հանկարծակիի բերեց ալ-Ջահիրին՝ ալ-Ադիլից հետո նամակ ուղարկելով նաև նրան: Հայոց արքան խնդրում է դադարեցնել հարձակումները: Հմուտ դիվանագիտություն բանեցնելով՝ Լևոնն ալ-Մալիք ալ-Ջահիրին հիշեցնում է, որ երբ նա երկիցս իր բոլոր զորքերն ուղարկել էր Դամասկոսը գրավելու, ինքը կարող էր ազատորեն ներխուժել Հալեպի սուլթանություն և մեծ վնասներ պատճառել, բայց չի արել՝ գերադասելով ծառայություն մատուցել Այյուբյաններին: Լևոնը նամակի հետ նաև մի փառահեղ ընծա է մատուցել ալ-Մալիք ալ-Ջահիրին, որով շահել է նրա վստահությունը¹²²:

ՓՆՈՒՆ ԶՈՐՐՈՐԴ: ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՎԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ-ՀԱԼԵՊԻ ԱՅՅՈՒԲՅԱՆ ՍՈՒԼՔԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ (1216-1230)

4.1 Միս-Հալեպ գինակցությունն ընդդեմ Իկոնիայի սուլթանության և Անտիոք-Տրիպոլիսի կոմսության: Լևոն Մեծագործի գահակալության վերջին տարիներին (1216-1219) երկրի միասնությունը մասամբ խախտվեց: Այս վիճակից փորձեց օգտվել նաև Ռայմոնդ-Ռուբենը, որը Լևոն Ա-ի գահակալության վերջին տարիներին թշնամացավ Հայոց թագավորի հետ և նույնիսկ նրան ձերբակալելու փորձ կատարեց¹²³: Դրանից օգտվելով Բոհեմունդ IV-ը վերջնականապես գրավեց Անտիոքը և այնտեղ իշխեց մինչև իր մահը (1233 թ.):

Իրադրությունը փոխվեց նաև Հալեպի սուլթանությունում: Սուլթան ալ-Մալիք ալ-Ջահիրը 1216 թ. մահացավ, և նրան հաջորդեց մանկահասակ որդին՝ ալ-Ազիզը: Երկրի կառավարումը ստանձնեց ալ-Ազիզի խնամակալ Շիհաբ ալ-Դին Տուրիլը:

Այսպիսով, 1216-1219 թթ. աննպաստ էին Կիլիկիայի հայկական թագավորության և Հալեպի Այյուբյան սուլթանության համար, մինչևդեռ մյուս երկու պետությունները՝ Իկոնիայի սելջուկյան սուլթանությունն ու Անտիոք-Տրիպոլիսի կոմսությունը, հաջողությամբ հաղթահարելով ներքին ու արտաքին մարտահրավերները, դարձան առավել զորեղ:

Երբեմնի թշնամիները՝ Կիլիկյան Հայաստանն ու Հալեպի Այյուբյան սուլթանությունը, դարձան գործակիցներ:

¹²² Տե՛ս Ibn Wasil, v. III, էջ 235:

¹²³ Տե՛ս Միքայել Ասորի, Ժամանակագրություն, 1870, էջ 520-521:

Այս մասին եզակի տեղեկություններ են պահպանվել Միքայել Ասորու երկի հայերեն խմբագրություններից մեկի՝ 1219 թ. վերաբերող այն վկայության մեջ, ըստ որի Լևոն թագավորը կեղծ տեղեկություններով նամակ գրելով մոլորության մեջ է գցում Իկոնիայի սուլթանին նպաստելով որ սելջուկները հետ քաշեն իրենց զորքերը և Այուբյանները վերստանան իրենց պատկանող բնակավայրերը¹²⁴:

Այլ աղբյուրներում նման տեղեկություն չկա և դժվար է անվերապահ կերպով հավատ ընծայել հաղորդմանը: Բարեբախտաբար այս հարցում մեզ օգնում է Ռումի սելջուկների պաշտոնական պատմիչ Իբն Բիբին, որը անուղղակիորեն հաստատում է ասորի պատմիչի տեղեկության հավաստիությունը¹²⁵:

4.2 Կիլիկյան Հայաստանի զինուժի մասնակցությունը Երզնկայի ճակատամարտին: Խնդրո առարկա դարաշրջանում բախտորոշ իրադարձություններից մեկն անկասկած Երզնկայի (կամ Յասի Չիմենի) 1230 թ. ճակատամարտն էր, երբ վերջնականապես ջախջախվեց շուրջ վեց տարի ամբողջ տարածաշրջանն ահ ու սարսափի մեջ պահող Ջալալ ալ-Դինի խորեզմյան բանակը:

Երբ Ջալալ ալ-Դինը 1225 թ. հայտնվեց Այուբյանների տերության սահմանագլխին՝ այդ տոհմի առաջնորդները, ինչպես միշտ, գտնվում էին ներքին հակամարտության մեջ: Ընդ որում, ուժերի հարաբերակցությունն այսպիսին էր՝ Եգիպտոսին տիրում էր ալ-Մալիք ալ-Ադիլի որդին՝ ալ-Մալիք ալ-Քամիլը (1218-1238), Կենտրոնական ու Հարավային Ասորիքին՝ ալ-Մուազզամը (կենտրոնը՝ Դամասկոս), իսկ Ջազիրային (Վերին Միջագետք) և Վանա լճի ավազանին՝ ալ-Մալիք ալ-Աշրաֆը: Սրանցից հատկապես վերջին երկուսի միջև լուրջ պայքար էր ընթանում:

Վերջապես իրեն ենթարկելով նաև Վրաստանն ու Հայաստանը Ջալալ ալ-Դինը 1230 թ. գարնանն արդեն ի վիճակի էր նոր լայնածավալ նվաճումներ կատարելու: Իրավիճակը տարածաշրջանի պետություններին ստիպեց սթափվելու և կտրուկ քայլերի դիմելու: 1230 թ. օգոստոս 7-ին Խարբերդից Երզնկա շարժվող Ջալալ ալ-Դինը դեմ հանդիման դուրս եկավ սելջուկների 6000-անոց¹²⁶ մի զորաբանակի: Վերջիններս, հանկարծակիի գալով, այդ օրը ջախջախիչ պարտություն կրեցին: Բայց սա ընդամենը նախերգանքն էր: 1230 օգոստոս 9-ին Երզնկայից ոչ հեռու՝ Յասի-Չիմեն գյուղի մոտ, Ջալալ ալ-Դինի 40 հազարանոց զորքը հանդիպեց դաշնակիցների հիմնական ուժերին, որ կազմում էին 25 հազար: Խորեզմցիները սկզբում հաջողակ էին, բայց ի վերջո պարտվեցին, նահանջեցին: Երզնկայի ճակատամարտի մասին հիշատակող արաբական¹²⁷ և ասորական¹²⁸ աղբյուրներից և ոչ մեկը չի հիշատակում դրան հայերի և ֆրանկների

¹²⁴ Միքայել Ասորի, Ժամանակագրություն, 1870, էջ 520-522:

¹²⁵ Տե՛ս Ibn Bībī, al-Muḥtaṣar, էջ 73-82:

¹²⁶ Ըստ Բար Հեբրեուսի՝ սելջուկների թիվը 4000 էր (տե՛ս Bar Hebraeus, էջ 395):

¹²⁷ Տե՛ս Мухаммад ан-Насави, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, էջ 256-257:

¹²⁸ Տե՛ս Bar Hebraeus, էջ 395:

մասնակցության մասին, բայց այդ մասին ակնարկում են երկու պարսկագիր պատմիչներ: Մասնավորապես Ջուվայնին, թեև ուղիղ ձևով չի վկայում ճակատամարտում հայերի մասնակցության մասին, բայց խոսելով 1227/1228 թվականի մասին գրում է, որ տարածաշրջանի երկրները, այդ թվում և Հայաստանը դաշինքի մեջ էին մտել ընդդեմ Ջալալ ալ-Դինի¹²⁹:

Անդրադառնալով ճակատամարտին՝ Կիրակոս Գանձակեցին գրում է, որ սուլթանները իրենց օգնելու համար կանչեցին Կիլիկիայի հայոց զորքերից ու նաև ծովեզերյա ֆրանկներից¹³⁰: Ապա նկարագրում է Երզնկայի ճակատամարտը վճռական դեր վերագրելով քրիստոնյա ռազմիկներին¹³¹:

Այսպիսով, 1216 թ. հետո Սիս-Հալեպ հարաբերություններում (անուղղակիորեն նաև Սիս-Մոսուլ հարաբերություններում) տիրապետող է դառնում համազործակցությունն ու զինակցությունը:

ԳՆՈՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ: ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ԱՍՈՐԻՔԻ ԱՅՅՈՒԲՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1230-1260)

5.1 Կիլիկիայի հայկական թագավորությունն ու Այյուբյան պետությունները 1230-1243 թթ.: Երզնկայի 1230 թ. ճակատամարտից հետո հարևան պետությունների հանդեպ Իկոնիայի սուլթանության քաղաքականությունը դարձավ խիստ ագրեսիվ: Դա արտահայտվեց ոչ միայն Կիլիկյան Հայաստանի, այլև սելջուկներին հավատակից պետությունների, այդ թվում՝ Հալեպի Այյուբյան սուլթանության հանդեպ: 1238 թ., Իկոնիայի և Հալեպի սուլթանական ընտանիքների միջև խնամիական կապեր հաստատվեցին: Սակայն դա անհավասար ուժերի մերձեցում էր, ինչի ազդեցությամբ Հալեպի վրա Իկոնիայի ճնշումը չափազանց մեծացավ: Այս շրջանում Կիլիկիայի հայկական թագավորության և Այյուբյանների (հատկապես՝ Հալեպի) հարաբերությունները կարելի է համարել չեզոք:

5.2 Կիլիկիայի հայկական թագավորությունն ու Ասորիքի Այյուբյան սուլթանությունը մոնղոլների դեմ հանդիման: 1243 թ. տեղի ունեցավ Չմանկատուկի նշանավոր ճակատամարտը, որը նախանշեց տարածաշրջանի ճակատագիրը հաջորդ մի քանի տասնամյակների ընթացքում: Իր հզորության գագաթնակետին գտնվող Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը, մոնղոլներից ջախջախիչ պարտություն կրելով, բռնեց թուլացման ու քայքայման ուղին: Կիլիկյան Հայաստանի համար ևս այն ունեցավ բախտորոշ նշանակություն, քանի որ հնարավորություն տվեց ազատվելու Իկոնիայի սուլթանությունից ունեցած կախվածությունից:

Չմանկատուկի ճակատամարտին հաջորդած մեկուկես տասնամյակում (1243-1258 թթ.) կիլիկյան իշխանությունները եռանդուն ջանքեր էին գործադրում հայ-մոնղոլական դաշինք հաստատելու և այն ամրապնդելու ուղղությամբ: XIII դ. 40-ական թթ. երկրորդ կեսին Հալեպի Այյուբյանները շարունակում էին

¹²⁹ Ġuwaynī, Kitāb Tārīḫ-e Ġahān-Guṣā, taṣḥīḫ-e Muḥammad Qazwīnī, v. 2, Baṣīl, Laydan, 1916, p. 170:

¹³⁰ Կիրակոս Գանձակեցի, էջ 228-229:

¹³¹ Նույն տեղում, էջ 229-230:

պարբերաբար հարաբերվել մոնղոլների հետ՝ անշուշտ վերջիններիս գերիշխանությունն ընդունելով: Սակայն ի տարբերություն Հեթում Ա-ի, Ալ-Նասիրը չչտապեց անձամբ մեծ խանին ներկայանալ և 1256-1260 թթ. սկսեց վարել հակասական քաղաքականություն: Պարզվում է, որ Հալեայի Այյուբյանները որոշել էին հետ կանգնել մոնղոլներին հնազանդվելու իրենց քաղաքականությունից, ինչի համար շատ շուտով պիտի զոջային:

Հալեայի սուլթանությունն ալ-Նասիր Յուսուֆի գլխավորությամբ 1242-1260 թթ. աստիճանաբար տիրացավ ամբողջ Ասորիքին, մի բան որ անմիջականորեն կապված էր Եգիպտոսում Այյուբյանների ձախողման և մամլուքների կողմից Կահիրեում իշխանության գրավման հետ:

Մոնղոլները 1258 թ. գրավեցին Բաղդադն ու վերացրին Աբբասյան խալիֆայությունը: Մոնղոլների հաղթանակներից ահաբեկված Ալ-Նասիր Յուսուֆը, անշուշտ, քաջ գիտակցում էր, որ հաջորդն ինքն է լինելու: Բայց նա ժամանակ չունեւր և պետք է ընտրություն կատարեր ենթարկվելու կամ անհույս դիմադրելու միջև:

5.3 Հալեայի ու Դամասկոսի գրավումը: Ասորիքի Այյուբյան սուլթանության վախճանը: Հեթում Ա-ը, զբաղված լինելով Իկոնիայի սուլթանության դեմ պատերազմով, չմասնակցեց մոնղոլների 1258 թ. արշավանքին: Այդ նույն տարում Հեթում Ա-ն սկսեց Հայոց թագավորության համար մի շատ կարևոր ծրագրի իրագործումը: Ըստ երևույթին, դեռևս 1254 թ.՝ Մանգու խանի հետ իր հանդիպման ժամանակ, նա համաձայնություն էր ստացել Իկոնիայի սելջուկների ու Հալեայի Այյուբյանների տիրապետության տակ գտնվող հայաբնակ բնակավայրերը միացնելու իր պետությանը: Դրա արտահայտությունն էր 1258 թ. Մարաշի գրավումը, որի մասին հաղորդում է Իբն ալ-Շիհնան¹³²: Սա Կիլիկյան Հայաստան հողերի ընդարձակման առաջին փուլն էր, որը Հայոց թագավորն իրագործեց սեփական ուժերով: 1259 թ. վերջից նոր փուլ նշանավորեց ինչպես հայ-մոնղոլական, այնպես էլ Կիլիկյան Հայաստան - Ասորիքի Այյուբյան սուլթանություն հարաբերություններում: Հեթում Ա-ը, արձագանքելով Հուլադուփ դիմումին, իր 10 հազարանոց զորքով միացավ Ասորիքի դեմ մոնղոլների առաջին մեծ արշավանքին¹³³: Կիլիկիայի հայկական թագավորության և Ասորիքի Այյուբյան սուլթանության փոխհարաբերությունների չեզոք շրջափուլն ավարտվեց:

Մոնղոլները 1260 թ. հունվարի 25-ին գրավեցին Հալեայը, իսկ մարտի 2-ին՝ նաև Դամասկոսը: Սակայն մոնղոլներին չհաջողվեց ավարտին հասցնել Ասորիքի նվաճումը: Մոնղոլների մուտքը Եգիպտոս կանխելու նպատակով, մամլուքյան զորքը Կուտուփի գլխավորությամբ 1260 թ. սեպտեմբեր 3-ին Պաղեստինի հյուսիսում՝ Այն Ջալուտ կոչված վայրում նրանց ճակատամարտ տվեց¹³⁴: Պարտության լուրն ստացած Հուլադուն սպանեց ալ-Նասիր Յուսուֆին: Այդպիսով

¹³² Տե՛ս Ibn al-Šihna, Al-Durr al-muntaḥab, էջ 192:

¹³³ Տե՛ս Bayarsaikhan D., նշվ. աշխ., էջ 121-137:

¹³⁴ Ճակատամարտի մասին մանրամասն տե՛ս Smith, J. M., Ayn Jalūt: Mamlūk Success or Mongol Failure?, Harvard Journal of Asiatic Studies, vol. 44, № 2, 1984, էջ 307-345:

Ասորիքում Այյուբյանների վերականգնման հույսերը վերացան: Հուլաղուն գրավված բնակավայրերից իր դաշնակից Հեթում Ա-ին զիջեց Բուրջ ալ-Ռասասը, Մարզաբանը (Մարզուբան), Ռաբանը և Դարպասկը: Հայոց արքան 1261 թ. գրավեց նաև Բեհեսնին: Ըստ արաբ պատմիչների՝ Ամանոսյան լեռների և Եփրատացվոց աշխարհի մի ամբողջ շարք ամրոցներ Հեթումի իշխանության տակ անցան, ընդհուպ մինչև կաթողիկոսանիստ Հռոմկլա ընկած երկրամասերը¹³⁵:

Այսպիսով, Հեթում Ա-ը Կիլիկիային միացրեց ամբողջ Եփրատացիքը: Թեկուզ կարճ ժամանակով, բայց Հայոց թագավորությունն աննախադեպ ընդարձակ տիրույթներ ձեռք բերեց: Մարաշից և Բեհեսնիից բացի հայոց թագավորությանն էին անցել նաև Ռաբանը, Քեսունը, Դարպասկը, Մարզուբանը (Մարզաբան), Շիհ ալ-Հադիդը¹³⁶:

Մամլուքյան իշխանությունների պատասխանը շատ չուշացավ: Արդեն 1266 թ. սուլթան Բայբարը առաջին լուրջ հարվածը հասցրեց Կիլիկյան Հայաստանին: Ի վերջո, 1268 թ. Անտիոքում կնքված հաշտության պայմանագրով Հեթում Ա-ը հանձնեց բերդերի մեծ մասը, որոնց տիրացել էր մոնղոլների օգնությամբ:

Այյուբյանները 1260 թ. հեռացան պատմական թատերաբեմից, քանի որ Եգիպտոսից հետո նրանք կորցրին նաև Ասորիքը՝ իրենց տեղն ամբողջովին զիջելով Մամլուքյան սուլթանությանը:

ՀԱՎԵԼՎԱԾ. ԱՅՅՈՒԲՅԱՆՆԵՐԸ «ՍԱՍՆԱ ԾՈՒՐ»-ՈՒՄ: Այյուբյանների հետ Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի հայերը 90-100 տարի գտնվեցին տարաբնույթ առնչությունների մեջ: Ավելի կարճ մի ժամանակահատված (1207-1232) Մեծ Հայքի հարավ-արևմտյան մասը անմիջականորեն ենթարկվեց Այյուբյաններին¹³⁷: Այս բոլոր փոխհարաբերությունները իրենց հետքն են թողել «Սասնա Ծուր» դյուցազնավեպի վրա:

ԵՂՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ բաժնում հանրագումարի են բերվել առենախոսության հետևյալ առանցքային դրույթներն ու եզրահանգումները. Արաբական պատմագրության մեջ համատարած կիրառություն ունեցած «Իբն Լևոն» բառակապակցությունը նշանակում է Լևոնյաններ (Ռուբինյաններ), «Բիլադ Իբն Լևոն»-ը՝ Լևոնյանների (Ռուբինյանների) երկիր, կամ որ նույնն է՝ «Կիլիկյան Հայաստան»: Տոհմի հիմնադիր է համարվում Լևոն Ա իշխանապետը (1129-1137): Վերոհիշյալ արտահայտությունները կիրառելի են XI դ. վերջից մինչև XIII դ. 20-ական թվականները: Սալահ ալ-Դինը Եգիպտոսում հիմնելով մի նոր պետություն՝ Ասորիքում հայտնվեց XII դ. 70-ական թթ. կեսերին: Նա 1180 թ. աշնանը պատժիչ-հետախուզական բնույթի հարձակում գործեց Կիլիկյան Հայաստանի սահմանամերձ մի ամրոցի վրա: Ռուբեն Գ-ն ոսկի տալով ու գերեվարված մուսուլմաններին ազատ արձակելով՝ հաշտություն կնքեց Սալահ ալ-Դինի հետ:

¹³⁵ Տե՛ս Դանիելյան Գ., Մամլուքյան սուլթանության և Կիլիկյան Հայաստանի հակամարտության ակունքները, էջ 151-152:

¹³⁶ Տե՛ս 'Izz al-Dīn ibn Sāddād, Al-A' lāq al-ḥaḫira, v. 1.2, էջ 115, 421, 434:

¹³⁷ Խլաթը գրավելու առաջին փորձը կատարել էր Սալահ ալ-Դինը դեռևս 1185 թ.:

Ռուբինյանների հետ հաշտությունը Այյուբյանները հիմնականում պահպանեցին մինչև սուլթանի մահը (1193 թ.): Դա փաստվում է նաև 1185-1186 թթ. Կիլիկյան Հայաստանից Եգիպտոս ուղարկված պատվիրակությանը Սալահ ալ-Դինի փոխանցած բարեխոսական ուղերձով: Սալահ ալ-Դինի վերջին 13 տարիների (1180-1193) հարաբերությունները Ռուբինյան իշխանապետության հետ կարելի է համարել հիմնականում չեզոք: Բացառություն են կազմում 1187/1188 թ. ասորիքյան մի զորաջոկատի Անտիոքից Կիլիկիա մտնելու փորձը և 1193-ին ընդհատված արշավանքը: Սալահ ալ-Դինի հաջորդների, մասնավորապես նրա որդու՝ Հալեպի սուլթան ալ-Մալիք ալ-Ջահիրի օրոք սուր մրցակցություն ծավալվեց հարևան պետությունների միջև: Լևոն Մեծագործի օրոք Կիլիկյան Հայաստանի ռազմաքաղաքական հզորացումը և հատկապես Անտիոքը Կիլիկիային միացնելու հեռանկարը խիստ անհանգստացրել էին հարևան պետություններին: Շուտով (1201-1203) ձևավորվեց Տրիպոլիս-Հալեպ-Իկոնիա հակակիլիկյան դաշինքը, որի մեջ Այյուբյանները կարևոր դեր ունեին: Կիլիկյան Հայաստանի վրա մեծ էր ճնշումը հատկապես 1203-1208 թթ., երբ Հայոց թագավորության և Այյուբյանների միջև բռնկվեց եռամյա մի պատերազմ (1203-1206), որը չնայած հայկական կողմի համար հաջող ընթացքին՝ ավարտվեց հաշտությամբ (պահպանվեց երկու տարի) ալ-Մալիք ալ-Ջահիրի առաջարկած պայմաններով, քանի որ մեծ էր Կիլիկիայի՝ բոլոր կողմերից հարձակման ենթարկվելու վտանգը: Թշնամական օղակումից դուրս գալու համար Լևոն Ա-ը եռանդուն կերպով պայքարում էր թե՛ զենքով, թե՛ դիվանագիտությամբ: 1208/1209-ին, ի պատասխան Լևոն Մեծագործի դիմումի, «Անտիոքյան» հարցին միջամտեց Եգիպտոսի Այյուբյան սուլթան ալ-Մալիք ալ-Ադիլը, որի արդյունքում Հալեպի և Իկոնիայի սուլթանները հաշտություն կնքեցին Հայոց թագավորության հետ: 1216 թ. Անտիոքի գրավումից հետո Լևոն Ա-ն էլ ավելի ակտիվացրեց արտաքին քաղաքականությունը՝ այն դարձնելով բազմաբևեռ: Դրա արտահայտությունն էր Եգիպտոսի ու Ասորիքի Այյուբյանների, Հռոմի պապի, գերմանական կայսրերի և այլ պետությունների հետ ընթացող աշխույժ դիվանագիտական աշխատանքը, որը շուտով տվեց իր դրական արդյունքները: Եգիպտոսի սուլթանի ճնշման տակ Հալեպի Այյուբյանները ձեռնպահ մնացին Կիլիկյան Հայաստանի դեմ թշնամական գործողություններից և հակակիլիկյան եռակողմ դաշինքը խզվեց: 1208-1216 թթ. Այյուբյան տիրակալների հետ Լևոն Ա-ի վարած ակտիվ դիվանագիտական աշխատանքն առաջին անգամ է ենթարկվում մանրամասն վերլուծության: Բացառիկ փաստաթուղթ է Հայոց թագավորի՝ արաբական աղբյուրներում հիշատակվող 1216 թ. ուղերձը Հալեպի Այյուբյան սուլթան ալ-Մալիք ալ-Ջահիրին: 1216 թ. նոր փուլ սկսվեց նաև Կիլիկիայի հայկական պետություն - Այյուբյան «համադաշնություն» փոխհարաբերություններում: Այս տարիները (1216-1230) անվանել ենք «Սիս-Հալեպ» գործակցության փուլ: Իրավիճակի թելադրանքով նախկինում թշնամի պետությունները դարձան բնական դաշնակիցներ: Կիլիկյան Հայաստանն ու Հալեպի Այյուբյան սուլթանությունը երկու առիթով (1219, 1225/1226 թթ.) միմյանց տարբեր կերպ աջակցեցին, իսկ 1228-1230-ին միացան հակաջալալեդդինյան

դաշինքին ու մասնակցեցին 1230-ի Երզնկայի ճակատամարտին: Կիլիկյան Հայաստան – Հալեպի Այյուբյան սուլթանություն դաշնակցային հարաբերությունների շրջանին (1216-1230) հաջորդում է չեզոք հարաբերությունների փուլը (1230-1259), որն իր հերթին բաժանվում է երկու ենթափուլի՝ 1230-1243 թթ., երբ երկու պետություններն էլ հավասարապես ենթարկվում են հզորության գագաթնակետին հասած Իկոնիայի սելջուկյան սուլթանության ուժեղ ճնշմանը և 1243-1259 թթ.-ի ենթափուլի, երբ 1243-ի բախտորոշ Չմանկատուկի ճակատամարտից հետո սելջուկների գերիշխանությանը տարածաշրջանում վերջ է դրվում: Այս շրջանում թե Հեթում Ա-ը և թե Այյուբյանները փորձում են հարաբերություններ մշակել մոնղոլների հետ: Մի բան, որ Կիլիկիայի դեպքում ավարտվում է հայ-մոնղոլական ամուր դաշինքով, իսկ Ասորիքի Այյուբյանների պարագայում, նրանք, ի վերջո ծախսողվում են Հուլաղուի հետ հաշտության եզրեր գտնելու հարցում՝ հայտնվելով մոնղոլական նվաճման դեմ հանդիման: 1259-1260 թթ. Կիլիկյան Հայաստան- Ասորիքի Այյուբյան սուլթանություն հարաբերությունները կարելի է բնորոշել որպես թշնամական: Կիլիկյան Հայաստանի գինված ուժերը միացան Հուլաղուի զորքերին, մասնակցելով մոնղոլների առաջին ասորիքյան արշավանքին, որով վերջ դրվեց Այյուբյանների իշխանությանը: Հեթում Ա-ի օրոք՝ 1259-1260 թթ., Կիլիկյան Հայաստանի գինված ուժերի մասնակցությունը Ասորիքի Այյուբյանների դեմ արշավանքին, բացի դաշնակցային պարտավորությունից ուներ նաև մի այլ՝ շատ կարևոր նշանակություն՝ հայաբնակ Եփրատացվոց աշխարհի միացումը Հայոց թագավորությանը: Այսպիսով 1260-1268 թվականներին Կիլիկիայի հայկական պետությունը հասավ ամենաընդարձակ չափերին իր ողջ 300-ամյա պատմության մեջ: Այյուբյան տոհմի ներկայացուցիչների և նրանց հիմնած պետությունների երկարատև հաղորդակցությունը Կիլիկյան Հայաստանի և հատկապես Հարավարևմտյան Հայաստանի հետ XII-XIII դարերում իր դրոշմն է դրել նաև «Սասնա Ծռեր» ժողովրդական դյուցազնավեպի վրա:

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

ա) Մենագրություն

1. Կիլիկյան Հայաստանը և Այյուբյան պետությունները, Եր., «Տիր» հրատ., 2017, 265 էջ:

բ) Հոդվածներ

1. The Cilician Principality and the Sultanate of the Ayyubids in the 70s-90s of the 12th century, «BYZANTINOS DOMOS», 5-6 (1991-1992), Athens, 1992, pp. 151-163:
2. Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականությունը XII դարի վերջին, «Պատմաբանասիրական հանդես», Եր., 2010, N 1 (183), էջ 114-128:

3. Կիլիկիայի հայկական թագավորությունն ու Հալեպի սուլթանությունը՝ դաշնակիցներ, «Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)», Եր., 2010, N 11, էջ 45-56:
4. Երզնկայի 1230 թ. ճակատամարտը և կիլիկեցիների դիրքորոշումը, «Բանբեր Մատենադարանի», Եր., 2014, N 21, էջ 147-157:
5. Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի մասնակցությունը Ջալալ ալ-Դինի դեմ դաշինքին, «Բանբեր հայագիտության» հայագիտական միջազգային հանդես, Եր., 2014, N 2-3 (5-6), էջ 62-80:
6. Ռուբինյան տոհմը արաբ պատմագրության մեջ, «Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում (պատմաբանասիրական ակնարկներ)», Եր., 2016, էջ 51-84:
7. «Իբն Լևոն» արքայատոհմը կամ Կիլիկիայի Լևոնյանները, «Էջմիածին» ամսագիր, Էջմիածին, 2016, հ. ԺԱ (նոյեմբեր), էջ 116-137:
8. Les noms donnés a la dynastie regnant en Cilicie dans l'historiographie arabe des XII-XIV siècles, «Revue des études arméniennes», Louvain, Belgique, 2016, N 37, pp. 126-144:
9. Քաղաքական կացությունը Արևելյան Միջերկրականի երկրներում XII դարի վերջին (ըստ հայ-հռոմեական 1199 թ. բանակցությունների վավերագրերի), «Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)», Եր., 2016, N 17, էջ 19-40:
10. Եգիպտոսի Այյուբյան սուլթանության գործոնը Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ (1208-1216 թթ.), «ՎԷՄ» համահայկական հանդես, Եր., 2016, N 4 (56), էջ 33-44:
11. The “Tripoli-Iconium-Aleppo” anticilician alliance during the “Antiochian war” (1201-1216), «Բանբեր հայագիտության» հայագիտական միջազգային հանդես, Եր., 2016, N3 (12), էջ 39-52:
12. Ռուբինյան իշխանապետությունը և արաբական աշխարհը 12-րդ դարի երկրորդ կեսին, Գեղարվեստի ակադեմիայի տարեգիրք, Եր., 2016, N 4, էջ 215-223:
- 13" Կիլիկյան Հայաստանի տարածքային ձեռքբերումները Հուլիոսի 1260 թ. ասորիքյան արշավանքից հետո, «Էջմիածին» ամսագիր, Էջմիածին, 2017, հ. Ա (հունվար), էջ 59-67 (համահեղինակ՝ Գ.Դանիելյան):
14. Կիլիկիայի հայկական թագավորության և Հալեպի սուլթանության միջև 1203-1206 թթ. պատերազմը, «Էջմիածին» ամսագիր, Էջմիածին, 2017, հ. Բ (փետրվար), էջ 80-86:
15. Третий крестовый поход и Киликийская Армения, Гуманитарные и юридические исследования /Научно-теоретический журнал/, Ставрополь, 2017, N 1, сс. 129-134.
16. Սալահ ալ-Դինի 1180 թ. արշավանքը Կիլիկյան Հայաստան, «Կանթեղ» գիտական հոդվածներ, Եր., 2017, N 1(70), էջ 117-129:

ТЕР-ГЕВОНДЯН ВААН АРАМОВИЧ

КИЛИКИЙСКАЯ АРМЕНИЯ И АЙЙЮБИДСКИЕ ГОСУДАРСТВА

Диссертация на соискание ученой степени доктора исторических наук по специальности 07.00.01 «История Армении».

Защита состоится 2-го мая, 2017 г. в 14⁰⁰ на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории Национальной академии наук РА (0019, Ереван, проспект Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

В период между 1171-1260гг. Киликийская Армения под управлением Рубена III, Левона Великого, регента Константина и Хетума I имела различные взаимоотношения с Аййюбидскими государствами.

Отдельно исследовалось значение термина «Ибн Левон» который широко использовался в арабской историографии. «Ибн Левон» является названием династии («Левониды»), соответствующим династии Рубенидов. Арабские исторические источники считают Левона I (1129-1137) основателем династии.

После основания нового государства в Египте (1171), на исторической сцене Сирии середины 70-ых годов XII века появился Салах ал-Дин. Осенью 1180г. он предпринял карательную операцию против Киликийской Армении и захватил одну из приграничных крепостей. Рубен III, предложив золото в качестве выкупа и освободив пленных мусульман, подписал мирный договор. До 1193г. Аййюбиды в целом соблюдали условия договора, что подтверждается и ходатайственным посланием Салах ал-Дина в поддержку армян Египта. Исключением являются: попытка вторжения в Киликию сирийского отряда в 1187/1188г., и прерванная кампания в 1193г.

В период царствования Левона I Киликия стала сильнее в политическом, военном и экономическом плане, расширила свои территории и провозгласила себя царством. Соседние же страны были озабочены тем, что в 1201-1216гг. Киликия имело возможность объединения с Антиохией, что сделало бы Киликию еще более опасной. В 1201-1203гг. был сформирован антикилийский альянс. Вскоре между Армянским царством и Алеппскими Аййюбидами вспыхнула война (1203-1206гг.). Чтобы прорвать вражеское кольцо, Левон I предпринял как военные так и дипломатические шаги.

В 1208/1209 гг. в ответ на обращение царя Левона, султан Египта – ал-Малик ал-Адил, заставил Алеппский и Иконийский султанаты подписать мирный договор с армянским царством. В 1216г., Левон I наладил дипломатические связи с Аййюбидами Египта и Сирии, с Папой Римским, императорами

Германии и руководителями других государств региона. Под нажимом султана Египта Алеппские Аййюбиды воздержались от военных действий против Киликийской Армении.

В данном исследовании впервые рассматривается активная дипломатическая деятельность Левона I с Аййюбидскими правителями в период между 1208-1216гг. и анализируется письмо Левона I султану Алеппо ал –Малик ал-Захиру (1216). В 1216г., в результате значительных изменений, произошедших как в Киликийской Армении, так и в Аййюбидской «конфедерации», взаимоотношения этих стран вступили в новую фазу – «период сотрудничества между Сисом и Алеппо» (1216-1230). В свете новых обстоятельств, бывшие вражеские государства стали естественными союзниками, дважды придя на помощь друг другу (1219, 1225/1226), а в 1230г приняв участие в битве при Ерзинка.

1230-1259гг. можно назвать периодом нейтральных отношений, в течение которого в 1243г. произошла судьбоносная битва при Чманкатуке (Кöseдаге). Хетум I, также как и Аййюбидские правители пытался наладить связи с монголами. Киликия добилась прочного союза с ними. Аййюбиды также вначале предприняли успешные шаги в этом направлении.

Однако, между 1256-1260гг., они стали вести противоречивую политику с монголами, что привело к провалу подписания мирного договора. Взаимоотношения Киликийской Армении с сирийским султанатом Аййюбидов в 1259-1260гг. снова стали враждебными. Киликийская армия в составе армии Хулагу приняла участие в военной кампании, которая положила конец Аййюбидам.

Участие Киликийской армии под предводительством царя Хетума I в этой кампании имело и другое важное значение: Армянское царство расширило свою территорию за счет сирийских Аййюбидов – присоединив населенную армянами Приевфратскую область.

Таким образом, между 1260-1268гг., Армянское государство Киликии достигло своих наибольших размеров. Представители династии Аййюбидов и основанных ими государств имели непрерывные контакты с армянами Киликийской Армении и, в особенности, Юго-западной Армении. Аййюбидский период оставил свой след в армянском народном эпосе «Сасунские удальцы».

TER-GHEVONDIAN VAHAN ARAM

CILICIAN ARMENIA AND THE AYYUBID STATES (1171-1260)

Dissertation for degree of Doctor of Sciences (History), on the specialization of
“History of Armenia” 07.00.01.

The defense of the dissertation will be held on May 2, 2017, 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Avenue 24/4).

SUMMARY

Throughout the period of 1171-1260 Cilician Armenia under Ruben III, Levon the Magnificent, Constantine the Regent and Hethum I had various types of relations with Ayyubid states. A special investigation was made to find out the significance of the terms “Ibn Levon” and “Bilad Ibn Levon” which were extensively used in Arab historiography. The conclusion is that “Ibn Levon” is a dynasty name – Levonids, which corresponds to Rubenids, and “Bilad Ibn Levon” means “The country of Levonids (Rubenids)” or simply “Cilician Armenia”. The Arab historical sources consider Levon I (1129-1137) founder of the dynasty.

After founding a new state in Egypt (1171) Salah al-Din appeared in Syria in the mid 70ees of the XII c. In 1176 he signed peace treaties with several states in the region. In autumn 1180 Salah al-Din initiated a punitive-predatory campaign against Cilician Armenia capturing a frontier fortress. Ruben III gave gold as ransom, freed the Muslim captives and signed a peace treaty. The Ayyubids were generally faithful to that treaty up to the death of the Sultan (1193). This is confirmed by the endorsing message of Salah al-Din for the Armenians of Egypt sent by a delegation from Cilician Armenia to Egypt. There can be only two exceptions – the attempt of a Syrian detachment in 1187/1188 to enter Cilicia and the interrupted campaign of 1193 on the eve of the death of Salah al-Din.

During the reign of Levon the Magnificent all the neighboring states, including Ayyubid sultanate of Aleppo, were very much preoccupied by the political, military and economic strengthening of Cilician Armenia, its proclamation as a kingdom and territorial widening. Moreover the perspective of uniting Antioch with Cilicia in 1201-1216 made the Armenian kingdom extremely dangerous from the point of view of neighboring countries.

Very soon (1201-1203) an anti-Cilician Tripoli-Aleppo-Iconium alliance was formed. A three year war (1203-1206) burst between the Armenian kingdom and the Ayyubids of Aleppo. With the aim of getting out of the hostile circle king Levon I was

making both military and diplomatic efforts. In 1208/1209 in response to king Levon's appeal, the sultan of Egypt al-Malik al-Adil forced the Aleppo and Iconium sultanates to sign a peaceful agreement with the Armenian kingdom. In 1216 Levon I initiated active correspondence and diplomatic relations with Ayyubids of Egypt and Syria, as well as with the Pope of Rome, German emperors and other state leaders. Under the pressure of the Egyptian sultan the Ayyubids of Aleppo abstained from hostile activities against Cilician Armenia.

In this dissertation the active diplomatic work done by Levon I in 1208-1216 with Ayyubid sovereigns is analyzed for the first time, as well as the letter of Levon I to the sultan of Aleppo al-Malik al-Zahir (1216).

In 1216, as a result of important changes occurred both in Cilician Armenia and in Ayyubid "confederation" a new phase started in their relations: "Sis-Aleppo cooperation period" (1216-1230). Under new circumstances former enemy states became natural allies, twice assisting to one another (1219, 1225/1226), and in 1230 participated in the battle of Yezinka. 1230-1259 years can be called a neutral one, through which the battle of Chmankatuk (Kösedagh) took place in 1243. Hethum I and Ayyubid sovereigns tried to establish relationship with Mongols. In case of Cilicia the result was a firm alliance with Mongols. In the case of Ayyubids the process was much more complicated. At first successful steps in that direction were made, while in 1256-1260 they started a contradictory policy towards Mongols which led to a failure in the issue of a peaceful treaty.

The relations of Cilician Armenia and the Ayyubid Sultanate of Syria in 1259-1260 can be defined as hostile once more. Now armenians joined the Hulaghu army participating in the first Mongol campaign against Syria which put an end to the Ayyubids. The participation of the Cilician army in that campaign led by king Hethum I had another important meaning as well. Armenian kingdom increased its territory at the expense of the Ayyubids of Syria by taking the Armenian-populated region of Euphratisia. Due to that in 1260-1268 the Armenian state of Cilicia reached its most extensive sizes.

The representatives of the Ayyubid dynasty and states founded by them had continuous contacts with Armenians of Cilician Armenia and especially of Southwestern Armenia. The Ayyubid period left its mark on the Armenian folk epic "Daredevils of Sasun".